

33-34(636-637)

20.12.2021

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар •

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

• Lusarar

ՉԵՌՔԸ ԴՐԱՅ ՍԵՓԱԿԱՆ ԽՂՃԻ ՎՐԱ

Դեկտեմբերի 10-ը իրավամբ կարելի է խորհրդանշական համարել Արցախի քաղաքական ներկայի ու ապագայի համար: Երեսուն տարի առաջ նույն այս օրը արցախահայությունը քվեարկեց նորահռչակ անկախության օգտին, իսկ հետագայում՝ 2006-ի դեկտեմբերի 10-ին, դարձյալ համաժողովրդական հանրաքվեով ընդունեց իր կյանքի հիմնական օրենքը: Առանց անդրադառնալու թվային տվյալներին՝ նշենք, որ թե՛ անկախության հանրաքվեն և թե՛ Սահմանադրության ընդունումը տեղի ունեցան ամենաբարձր մասնակցությամբ ու միասնական կամարտահայտությամբ: Այսպիսի հիմնակետով, բնականաբար, կարելի էր ոչ միայն կռել նորանոր հաղթանակներ, այլև պահպանել դրանք: Հաղթանակներ, իրոք, եղան, իսկ ահա դրանք պահպանելը, մեղմ ասած, դարձավ ոչ հնարավոր: Ինչո՞ւ...

Բոլոր հետևանքներն էլ իրական պատճառներ ունենում են, սակայն մենք կարծեք անտեսում ենք անգամ աչք ծակող պատճառները, որոնցից մեկը... վնասված միասնականությունն է: Եթե մի կողմ դնենք քարոզչաթեզերը և սթափ նայենք իրերի վիճակին, կտեսնենք, որ այդ միասնականությունը որոշ չափով բացակայում էր նաև երեք տասնամյակ առաջ՝ արևելքի ու հրթիռների պայթյունների տակ հանրաքվե իրականացնելիս: Խոստովանենք, այն ժամանակ էլ շրջանառվում էր զարգացման մի տեսակետ, ըստ որի Արցախի փրկությունը ոչ թե անկախ պետականության կերտման, այլ Սայր Հայաստանին միանալու մեջ է: Այս երկու մոտեցումների առանցքում Արցախի՝ Ադրբեջանից անջատվելու ընդհանրական նպատակն էր, սակայն մարտավարական տեսակետից դրանք տարբեր որդեգրումներ էին պահանջում: Գերակա հանընդունվելով անկախության քաղաքական թեզը՝ «միացում»-ի գաղափարն, այնուամենայնիվ, մնաց օրակարգում, և այն հիմա էլ առիթներով շրջանառություններ ունենում է: Մեր խնդիրը չէ քննարկել դրանց առաջնությունը, դա քաղաքական ուժերի քննարկումների թեմա է, սակայն չենք կարող չհատկանշել ներկա աշխարհաքաղաքական իրողությունների համապատկերի մեր միասնականության անհրաժեշտությունը:

Այն զաղափարը, հանուն որի հազարավոր նվիրյալների արյուն է թափվել, պետք է ուղղորդող մնա մեր հետագա գործողություններում, և այս իմաստով 1991-ի դեկտեմբերյան հանրաքվեի նշանակությունն անփոփոխ մեծ է: Օրինաչափ ու տրամաբանական էր նաև անկախության հանրաքվեից տասնհինգ տարի անց Սահմանադրության ընդունումը ԼՂՀ-ում, որն արդեն տեղի ունեցավ տարածաշրջանում հաստատված հարաբերական խաղաղության պայմաններում: Սահմանադրությունը պարզապես պետական գերկարևորության փաստաթուղթ չէ, այն կենսակերպ է, յուրօրինակ ճանապարհային քարտեզ, որում ի թիվս այլ կարևորությունների՝ շեղված են քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները: Արդյո՞ք լիարժեք յուրացրել ու անվերապահորեն պահպանում ենք սահմանադրական այս նորմերը: Հարցին պատասխանելուց առաջ հարկ է ձեռքը դնել սեփական խղճի վրա, և բնավ էական չէ, թե խիղճ կոչեցյալը որտեղ է գտնվում՝ չինովնիկական աթոռի՞ն, պատգամավորական ամբիոնի՞ն, շինարարական ամբարձիչ կռուկի խցիկի՞ն, իրավապահի ուսադիրների տա՞լ, թե՛ այլուր...

Բոլոր սխալները, որոնք կատարվում են յուրաքանչյուրիս չիմացությամբ կամ անտարբերությամբ, բուներանգի պես անդրադառնում են երկրի ճակատագրի վրա: Բավականին թանկ ենք վճարել մեր պետականությունը կերտելիս, պահպանենք ու պաշտպանենք ստեղծածը՝ հիմքում ունենալով դեկտեմբերի 10-ի անշրջելի խորհուրդը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԻՆՉՊԵ՞Ս ՉԸՍԻՐԵՄ, ԵՐԿԻՐ ԻՄ ԿԻՉՎԱՅ



Վահան ՏԵՐՅԱԼ


Ինչպե՞ս չըսիրեն, երկիր իմ կիզված, Պարզված վերջստին սրերին սուրսայր. Ինչպե՞ս չըսիրեն - հեզությամբ լցված Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր:

Որքան որ ելան արյունիդ ազահ, Դու կամավոր գոհ - բոլորը տվիր. Դու հավետ եղար անարատ վրկա - Չարերի կոխան, խաչված իմ երկիր:

Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ, Աշխարհի համար պարզեցիր անպարտ, Հեզ ընդունեցիր երդում ու երկունք, Դու արքայաբար վեհ ու անհպարտ:

Ժամ է, ել նորից, իմ ծիրանավար, Չրահավորվիր խանդով խնդազին, Վառիր երկունքի գիշերում խավար Հրով մկրտված նաիրյան հոգին...

ՇԵՆՈՎԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ



Դեկտեմբերի 15-ին ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանի և ԱՀ նախագահի սփյուռքի հարցերով խորհրդական Ազատուհի Սիմոնյանի նախաձեռնությամբ տեղի է ունեցել հեռավար հանդիպում-քննարկում Լիբանանի հայկական վարժարանների տնօրինության հետ:

Քննարկման օրակարգային թեմաներն էին՝ քույր դպրոցների ծրագիրը, դրա հայեցակարգի քննարկումը և կիրարկման ճանապարհային քարտեզը:

Քննարկմանը մասնակից դպրոցների տնօրեններն ուրախությամբ հաստատեցին իրենց դպրոցների ընդգրկվածությունն այս ծրագրին՝ մատնանշելով, որ այն լրացնելու է տարիների բացը՝ Արցախն ավելի լավ ճանաչելու ու շփումներ հաստատելու առումով:

Առաջիկայում սպասվում են երկուստեք՝ Արցախի և Լիբանանահայ դպրոցների միջև նմանատիպ քննարկումներ համագործակցային ծրագրերի շուրջ:

ԱՀ ԿԳՄՍ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԹԱՓ Է ԱՌՆՈՒՄ



Դեկտեմբերի 11-ին ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանն ընդունել է Երևանից ժամանած պատվիրակությանը, որի կազմում ընդգրկված էին ավագանու անդամներ, Երևան քաղաքի վարչական շրջանների կրթության բաժինների ներկայացուցիչներ, մանկապարտեզների տնօրեններ և աշխատողներ:

Հանդիպմանը ներկա էր ԱՀ նախագահի՝ կրթության գծով խորհրդական Վահրամ Սողոմոնյանը: Լ. Ղարախանյանը ողջունեց մեծանուն ներկայացուցչական կազմով խմբի այցը Արցախ, որի նպատակն է ծանոթանալ «Երկարօրյա դպրոց» ծրագրի ընթացքին, ցուցաբերել մեծազանց և այլ աջակցություն: Հանդիպմանն արժարժվել է նաև Արցախի նախադպրոցական հաստատություններին մեթոդական և ծրագրային աջակցության տրամադրման, վերապատրաստման դասընթացների անցկացման անհրաժեշտությունը: Հյուրերը պատրաստակամություն են հայտնել կազմակերպել փոխայցելություններ ավելի մեծ կազմով ինչպես ԱՀ և ՀՀ կրթական ոլորտների աշխատանքներն ավելի համակարգված դարձնելու, այնպես էլ Հայաստան-Արցախ կապը սերտացնելու նպատակով:

Սեփ. լրատվություն

ԱՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՆ ԱՐՉԱՎԱՆՔԵԼ Է

Ադրբեջանն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամ: Երևույթին անդրադարձել է ԱՀ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը. «Ադրբեջանի՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ձինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամ ընտրվելու իրողությունն ինքնին խորը մտահոգությունների և անվստահության մթնոլորտ ձևավորելու հիմնավոր պատճառ դարձավ համամարդկային մշակութային ժառանգության պահպանման առաքելությանը կյանքի կոչված միջազգային հիշյալ կազմակերպության

նկատմամբ: Հատկապես վերջին տասնամյակներում Ադրբեջանի կողմից հայատյացության խորապատկերին հայկական մշակութային ժառանգության նկատմամբ իրականացրած բացահայտ վանդալիզմի քաղաքականության մասին փաստարկները բազմիցս ներկայացվել են միջազգային ամենատարբեր հարթակներում: Սակայն արդյունքում այդ պետությունը ոչ միայն պատասխանատվության չի ենթարկվել, այլև շարունակելու միանգամայն ագրեսիվ քաղաքականություն է որդեգրել հատկապես 2020թ. սեպտեմբերին իր իսկ կողմից սանձազերծված պատերազմի թե ընթացքում և թե պատերազմից հետո՝ նախաձեռնելով ու ոչնչացնելով

Արցախի Հանրապետության՝ իր կողմից բռնազավթված տարածքներում առկա, բացառապես հայկական ժազման, բազմահազար պատմամշակութային տարաբնույթ հուշարձանները: Հոկտեմբերի 7-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից երկու անգամ հրթիռակոծվեց Շուշիի Աուրբ Ղազան-չեցոց եկեղեցին: Պատերազմի ավարտից հետո պայթեցվեց Շուշիի Կանաչ ժամ կամ Մուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, շարունակվող վանդալիզմի գոհ դարձան մշակութային բազմաթիվ հաստատություններ, ինչի մասին փաստում են իրենց իսկ կողմից համացանցում տեղադրված տեսանյութերն ու լուսանկարները: Իսկ ներկա ժամանակներում Ադր-

բեջանում հայատյացության խորապատկերին երկրի նախագահի մակարդակով հայկական հուշարձանների ոչնչացման, հուշարձաններից հայատառ գրությունների վերացման մասին հրահանգները լուրջ պայացույցներ են այն մասին, որ այդ երկիրը շարունակում է մնալ որպես համամարդկային քաղաքակրթության թշնամի: Թվում է՝ միջազգային կառույցների կողմից այդ ամենի նկատմամբ արձագանքները պետք է լինեին համարժեք, սակայն, տարաբախտաբար, ակամատես ենք լինում միանգամայն հակառակ վերաբերմունքին»:

ԱՀ ԿԳՄՍ
Այս մասին՝ տես նաև էջ 4

ԵՐԿԱՐՈՐՅԱՆ ԴՊՐՈՑ

ՆՊԱՏԱԿԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՅՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԱճԽՈՒԺԱՅՈՒՄ



Դպրոցահասակ երեխաներին արդյունավետ ուսումնական գործընթացում ընդգրկելու, ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքների բեռը թեթևացնելու, սովորողների դասապատրաստումների աջակցման, ինքնուրույն սովորելու կարողությունների, ստեղծագործական ունակությունների զարգացման նպատակով Արցախում 2021թ. ներդրվել է «Երկարությամբ» ծրագիրը: Արցախյան երրորդ պատերազմի հետևանքների, ետպատերազմյան իրավիճակի հաղթահարման այս ծրագրերից մեկը ԱՅ ԿԳՄՍՆ-ի կողմից հռչակվեց ռազմավարական, և սեպտեմբեր ամսից Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Շուշիի շրջանների 14 համայնքներում գործարկվեց «Երկարությամբ» նախագիծը: Այն կյանքի կոչելու համար իրականացվեցին մի շարք միջոցառումներ, որոնց շուրջ «Լուսարար»-ը հարցազրույց ունեցավ «Երկարությամբ» բովանդակային մասը համակարգող, ԱՅ ԿԳՄՍ նախարարի խորհրդակցական Ալենուշ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ հետ:

- Տիկին, Գրիգորյան, ետպատերազմյան Արցախում ինչպե՞ս հաջողվեց նման խոշոր նախագիծը կարճ ժամանակամիջոցում գործարկել:

- ԱՅ կառավարության կողմից իրականացվող այս ազգային ծրագիրը, լինելով առանձնահատուկ նորարարական սոցիալ-կրթական մոդել, հնարավոր դարձավ կարճ ժամկետում ի կատար ածել «Հայաստան» համահայկական հիմնադրամի և այլ դոնորների ֆինանսական միջոցներով ու մասնագիտական խմբերի ինտենսիվ աշխատանքի,

Արցախի պետական մարմինների աջակցության շնորհիվ: Մենք երկարությամբ ծրագիրը իրականություն ենք դարձնում ԱՅ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) հետ համատեղ: Երկարությամբ ծրագրերի, այսպես ասած, ֆիզիկական մասի (շենքային, գույքային, սննդի մատակարարման) պատասխանատվությունը դրված է ԱՅ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, բովանդակային մասը (մեթոդական, ծրագրային, աշխատավարձ, աշխատողների վերապատրաստումներ)՝ ԱՅ ԿԳՄՍՆ-ի վրա: Երկարությամբ ծրագիրը մշակվել է կրթության ոլորտի փորձագետների կողմից համակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական կառուցվածքներում: Ծրագրի կազմակերպման կարգը մշակել է աշխատանքային խումբ, որի մեջ ընդգրկվել են Սննդի անվտանգության ծառայության, առողջապահության նախարարության մասնագետներ: Ծրագիրն անցել է փորձաքննության փուլ, ամրագրվել համապատասխան ընթացակարգով:

Մեկ դպրոցի լիարժեք անցումը երկարությամբ կազմում է շուրջ 20 մլն դրամ: Դրա մեջ մտնում են վերանորոգված դասասենյակներ՝ համալրված նոր գույքով, խոհանոց՝ ամրաժեշտ պարագաներով, ճաշարան: Դասասենյակները սովորական չեն, ձևավորված են հատուկ դիզայնով, ժամանակակից սարքավորումներով, գրականությամբ, խաղերով, որպեսզի գրավիչ լինեն երեխաների համար: ԱՅ կառավարության կողմից հատկացվել է 95.844.392 դրամ՝ երկարությամբ դպրոցների ընթացիկ և սննդի մատակարարման ծախսերի համար: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության բյուջետային միջոցներից հատկացվել է շուրջ 6,5 մլն դրամ՝ ձեռք բերելու այս դպրոցների համար լրացուցիչ էլեկտրոնային սարքավորումներ: Ծրագրի ֆինանսավորումը ներառվել է ԱՅ 2022թ. պետական բյուջեի նախագծում՝ նրա շարունակականությունը ապահովելու համար: Յուրաքանչյուր կիսամյակում ծրագիրն միանալու է 15 դպրոց: Երկու տարվա ընթացքում Արցախի բոլոր դպրոցները պետք է դառնան երկարությամբ: Ներկայումս երկարությամբ դպրոցի շահառու է 1453

երեխա, աշխատանքի է ընդունվել 97 աշխատող՝ դասապատրաստող և խոհարար: Նախապատվությունը տրվել է տեղիհանված անձանց:

- Ծրագրի բովանդակային առումով ի՞նչ կարևոր աշխատանքներ կառանձնացնեիք:

- 2021թ. փետրվարից սկսվել է ծրագրի մշակման գործընթացը, որին մասնակցել են ՀՀ առաջատար փորձագետներ, այդ թվում՝ Սերոբ Խաչատրյանը: Իսկ օգոստոսին անցկացվել են ծրագրում ընդգրկված դպրոցների 54 մանկավարժների, 28 տնօրենների և փոխտնօրենների մեկշաբաթյա վերապատրաստումներ՝ ՀՀ-ից հրավիրված փորձառու մասնագետների և ճանաչված փորձագետների մասնակցությամբ: Բոլոր մանկավարժները, մասնագետները խմբային վերապատրաստում են անցել «Մասնակցային կրթություն» և «Երկարությամբ» մոդելի շրջանակում:

Երկարությամբ դպրոցի կարևոր բաղադրիչներից է սննդի կազմակերպումը: Այն միայն սոցիալական չէ, նաև կրթական է: Դպրոցներում չկան ճաշարաններ, բուֆետներ, համախանառոց սնունդ է վաճառվում: Կազմակերպիչները զբաղվել են նաև սննդի կազմակերպման և ճաշացանկի կազմման հարցերով: Նույն ամսին «Դպրոցական սնունդ» ծրագրով «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիրի» և «Եզնիկ Մոզայ» ուսումնարանի հետ համագործակցությամբ կազմակերպվել են երկարությամբ դպրոցների 43 խոհարարների երկշաբաթյա վերապատրաստումներ:

- Ծրագրի ներդրումով ինչե՞նցիմ մտահոգություններ, թե այն կարող է խանգարել արտադպրոցական խմբակների գործունեությանը կամ էլ հակառակը, դրանք կխանգարեն բոլոր աշակերտների երկարությամբ ընդգրկվելուն:

- Երկարությամբ բոլոր դպրոցներում ներառված են առարկայական խմբակներ: Իսկ Հաթերք, Անի, Չափար, Վանք, Սոս, Խրամորթ համայնքների դպրոցներում կան «Դասավանդիչ, Հայաստան»-ի ուսուցիչներ, որոնք համայնքային զարգացման համար ծրագրեր են առաջ քաշել, որոնց մեծ մասը մշակվել է երկարությամբ ընթացքում: Այսինքն՝ երկարությամբ ոչ միայն իրականացվում է դասապատրաստում,

այլև ստեղծվել է գործնական հետազոտական և ինքնուրույն աշխատանքով համայնքի համար ինչ-որ բան անելու, գիտելիքը, ունակությունները գործնականորեն կիրառելու հնարավորություն: Երկարությամբ դպրոցն ստեղծում է սովորողների համակողմանի զարգացման միջավայր, մշակութային, մարզական, ժամանցային պարապմունքները նրանց ինքնադրսևորման համար լավ միջոց են: Եթե շենքային պայմանները ներում են, դպրոցից դուրս մինչ այդ կազմակերպվող արվեստի, մարզական գծով պարապմունքներն անցկացվում են այստեղ: Միասին սովորել, աշխատել մատաղ սերնդի մոտ միասնականության զգացում է առաջացնում, իրար օգնելու, միմյանց ավելի լավ ճանաչելու և հարգանք ձեռք բերելու հնարավորություններ: Դպրոցը հզորանում է, որովհետև երեխան իր տաղանդի բացահայտումն այստեղ է տեսնում:

- Ինչպե՞ս են ծրագրին արձագանքում դպրոցներում, համայնքներում:

- Կասեի՝ ոգևորությամբ է ընդունվել: Մենք միշտ կապի մեջ ենք նրանց հետ և հարցումներ ենք անցկացնում: Աշանի դպրոցի տնօրենի խոսքով՝ նկատվում է սովորողների առաջադիմության բարձրացում: Այն երեխաները, ովքեր սովորաբար անպատաստ էին դասի գալիս, հիմա որոշակի պատրաստվածությամբ են ներկայանում: Առանձնապես գոհունակությամբ են արտահայտվում մոտոցները: Երեխաները կրթվում են, մինչև երեկոյան ժամը 5-ը գտնվում են դպրոցում, իսկ իրենք հանգիստ աշխատում են: «Երկար սպասված ծրագիր է», «Հիանալի է, մայրաքաղաքում հրատապ է և կրկնակի կարիք ունի», -գրում են ֆեյսբուքյան օգտատերերը:

Երկարությամբ նաև ապահովվում է սոցիալական հավասարություն: Բոլոր մոտոցները չեն ի վիճակի տանը երեխաների հետ աշխատել և ժամանակի, և գիտելիքների առումով: Իսկ այստեղ բոլորը հավասարապես ուշադրության են արժանանում: Չպետք է անտեսել նաև սննդի հավասարությունը:

Ծրագիրը նոր է, և մենք հավանաբար չենք այն մտքին, թե այն զերծ չէ ռիսկերից, խնդիրներից, բայց դրանք լուծվում են ինքնաբերականորեն: Ամառային վերապատրաստումներով չեն ավարտվել ծրագրում ներգրավված մանկավարժները:

նրա, մասնագետների հետ աշխատանքները: Ստեղծվել են ֆեյսբուքյան փակ և Zoom հարթակներ, վայրերի խմբեր, որտեղ նրանց հետ պարբերաբար քննարկումներ են արվում: Նրանք իրենց ամեն օրվա աշխատանքը նկարներով, տեսագրությամբ տեղադրում են, և փորձի փոխանակում է կատարվում: Ժագած խնդիրները, միմյանց հետ խորհրդակցելով, լուծում են: Այսպես, Երևանի բժշկական համալսարանի սննդաբան դասախոսի հետ առջանց քննարկում ենք կազմակերպել սննդի հարցերի վերաբերյալ: Այդ կերպ հնարավոր է դառնում նաև աշխատանքները վերահսկել:

Առջանց հանդիպումներից բացի անցկացվում են նաև կենդանի շփման քննարկումներ: Օրերս Երևանից ներկայացուցչական պատվիրակություն է եկել Արցախ: ԱՅ ՏԿԵ նախարարությունից երկարությամբ ծրագիրը համակարգող Սեյրան Մայիլյանը և ես ներկայացրել ենք կատարված աշխատանքները: Կազմակերպվել է հանդիպում-քննարկում «Երկարությամբ» ծրագրում ներգրավված դպրոցների տնօրենների հետ: Մասնագետները ներկայացրել են սննդի կազմակերպման առնչվող նորմատիվները և գնման գործընթացի օրենսդրական պահանջները, երեխաների սննդի կազմակերպման ընթացակարգը, պատասխանել ներկայանում: Առանձնապես գոհունակությամբ են արտահայտվում մոտոցները: Երեխաները կրթվում են, մինչև երեկոյան ժամը 5-ը գտնվում են դպրոցում, իսկ իրենք հանգիստ աշխատում են: «Երկար սպասված ծրագիր է», «Հիանալի է, մայրաքաղաքում հրատապ է և կրկնակի կարիք ունի», -գրում են ֆեյսբուքյան օգտատերերը:

Երկարությամբ նաև ապահովվում է սոցիալական հավասարություն: Բոլոր մոտոցները չեն ի վիճակի տանը երեխաների հետ աշխատել և ժամանակի, և գիտելիքների առումով: Իսկ այստեղ բոլորը հավասարապես ուշադրության են արժանանում: Չպետք է անտեսել նաև սննդի հավասարությունը:

ԱՄԱՆՈՐՅԱ ԵՐՈՒՉԵՌ ԱՌԱՋԱՂՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅՈՒՄ

Անցնում է հին տարին: Օրերի հաշվարկում մենք թողնում ենք լավ ու վատ, անհոգ ու հոգաշատ, ուրախ ու տխուր օրեր:

Անցած տարիների ցավն ու կակիծը սրտերում պահած՝ փորձում ենք սթափ գնահատել մեր կյանքի յուրաքանչյուր պահի և հնարավորինս աշխուժացնել, ուրախացնել երեխաներին, տոն դարձնել նրանց օրը: Այս գիտակցումով նախատոնական եռուզեռ է Առաջածորի Ա. Պողոսյանի անվան միջնակարգ դպրոցում: Բոլոր դասարաններում նկատվում է երեխաների ակտիվությունը՝ իրենց դասասենյակին ամենատոնական

տեսք հաղորդելու համար: Դասասենյակներն արդեն զարդարված են ինքնատիպ տոնածառերով ու ձեռքերով:

Կերտների հմտությունները, ձևավորել գեղագիտական ճաշակ, առաջացնել մրցակցություն, ինչը խթան կհանդիսանա նաև ուսման մեջ մրցակցելուն: Ամեն կողմից լսվում է աշակերտների զվարթ ծիծաղը: Երբ հետևում են նրանց աշխատանքին, տեսնում են, որ նրանք ամեն կերպ փորձում են ցրել հին օրերի մռայլը՝ գալիք տարին դիմավորելով ամանորյա գունդը զարդարանքով, որոնց մեջ պահված են ապագայի երազանքները: Միջանցքներում դրված արկղիկներն արդեն լցվել են Ձմեռ պապին ուղղված մեմոներով: Երբ հարցում

են աշակերտներին, թե որն է նրանց ամենամեծ սպասելիքը գալիք տարուց, բոլորը գրեթե մույն պատասխանն են տալիս՝ խաղաղություն, զինվորների անփորձանք ծառայություն և բարի վերադարձ իրենց ծնողներին:

Մյուս կողմից, երեխաների ամենամեծ ցանկությունը խաղաղությունն է, որովհետև նրանք զգացել են պատերազմի համը, տեսել խաղաղ երկնքից զրկված մի ողջ ժողովրդի տառապանքն ու ցավը: Սիրելի՛ աշակերտներ, թող այսուհետ ձեր կյանքի հին ու նոր տարիները լինեն խաղաղ, ձեր երազները՝ իրականացած:

Երբ հետևում են նրանց աշխատանքին, տեսնում են, որ նրանք ամեն կերպ փորձում են ցրել հին օրերի մռայլը՝ գալիք տարին դիմավորելով ամանորյա գունդը զարդարանքով, որոնց մեջ պահված են ապագայի երազանքները: Միջանցքներում դրված արկղիկներն արդեն լցվել են Ձմեռ պապին ուղղված մեմոներով: Երբ հարցում

են աշակերտներին, թե որն է նրանց ամենամեծ սպասելիքը գալիք տարուց, բոլորը գրեթե մույն պատասխանն են տալիս՝ խաղաղություն, զինվորների անփորձանք ծառայություն և բարի վերադարձ իրենց ծնողներին: Մյուս կողմից, երեխաների ամենամեծ ցանկությունը խաղաղությունն է, որովհետև նրանք զգացել են պատերազմի համը, տեսել խաղաղ երկնքից զրկված մի ողջ ժողովրդի տառապանքն ու ցավը: Սիրելի՛ աշակերտներ, թող այսուհետ ձեր կյանքի հին ու նոր տարիները լինեն խաղաղ, ձեր երազները՝ իրականացած:



V դասարան

քի աշխատանքներով: Յուրաքանչյուր դասարան փորձում է լավագույնը լինել արդեն ավանդույթ դարձած «Դասասենյակի ամանորյա կահավորում» մրցույթում, որի նպատակն է երևան հանել աշա-

կերտների հմտությունները, ձևավորել գեղագիտական ճաշակ, առաջացնել մրցակցություն, ինչը խթան կհանդիսանա նաև ուսման մեջ մրցակցելուն: Ամեն կողմից լսվում է աշակերտների զվարթ ծիծաղը: Երբ հետևում են նրանց աշխատանքին, տեսնում են, որ նրանք ամեն կերպ փորձում են ցրել հին օրերի մռայլը՝ գալիք տարին դիմավորելով ամանորյա գունդը զարդարանքով, որոնց մեջ պահված են ապագայի երազանքները: Միջանցքներում դրված արկղիկներն արդեն լցվել են Ձմեռ պապին ուղղված մեմոներով: Երբ հարցում

են աշակերտներին, թե որն է նրանց ամենամեծ սպասելիքը գալիք տարուց, բոլորը գրեթե մույն պատասխանն են տալիս՝ խաղաղություն, զինվորների անփորձանք ծառայություն և բարի վերադարձ իրենց ծնողներին: Մյուս կողմից, երեխաների ամենամեծ ցանկությունը խաղաղությունն է, որովհետև նրանք զգացել են պատերազմի համը, տեսել խաղաղ երկնքից զրկված մի ողջ ժողովրդի տառապանքն ու ցավը: Սիրելի՛ աշակերտներ, թող այսուհետ ձեր կյանքի հին ու նոր տարիները լինեն խաղաղ, ձեր երազները՝ իրականացած:

Երբ հետևում են նրանց աշխատանքին, տեսնում են, որ նրանք ամեն կերպ փորձում են ցրել հին օրերի մռայլը՝ գալիք տարին դիմավորելով ամանորյա գունդը զարդարանքով, որոնց մեջ պահված են ապագայի երազանքները: Միջանցքներում դրված արկղիկներն արդեն լցվել են Ձմեռ պապին ուղղված մեմոներով: Երբ հարցում

են աշակերտներին, թե որն է նրանց ամենամեծ սպասելիքը գալիք տարուց, բոլորը գրեթե մույն պատասխանն են տալիս՝ խաղաղություն, զինվորների անփորձանք ծառայություն և բարի վերադարձ իրենց ծնողներին: Մյուս կողմից, երեխաների ամենամեծ ցանկությունը խաղաղությունն է, որովհետև նրանք զգացել են պատերազմի համը, տեսել խաղաղ երկնքից զրկված մի ողջ ժողովրդի տառապանքն ու ցավը: Սիրելի՛ աշակերտներ, թող այսուհետ ձեր կյանքի հին ու նոր տարիները լինեն խաղաղ, ձեր երազները՝ իրականացած:

Երջանիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Առաջածորի Ա. Պողոսյանի անվան միջն. դպրոցի ՄԿԱԳՏ

ՂԱՍՆԵԱՑՆԵՐ

ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՍԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԱՄԵՆԱԳԼԽԱԿՈՐՆ ԵՆ

2020թ. աշնանային պատերազմը տակնուվրա արեց մեր ժողովրդի հոգեկան վիճակը: Նրան նորից բնականոն հունի մեջ դնելու համար առեւելի ջանքեր են պահանջվում: Ամենախոցելի խավը երեխաներն են, որոնց հետ աշխատող մեծերը նույնպես հոգեկան աջակցության կարիք ունեն: Ահա ինչու պատերազմից անմիջապես հետո իր գործն սկսած կրթական համակարգն արագորեն վերականգնակերպվելու ուղղված միջոցառումներ իրականացրեց: Ծեռային, գույքային կորուստներից առավել դժվարը սովորողների և մանկավարժների հոգեկան ցերեղաշնչակությունը վերականգնելն էր, ինչին էլ անմիջապես ձեռնամուխ եղավ կրթական գերատեսչությունը՝ առաջնահերթ իրականացնելով բնակչության հոգեկան աջակցության և հոգեբանական վերապատրաստման ծրագրեր:

Մի փոքր անդրադարձ մեկ տարվա կտրվածքով այս ոլորտում կատարվածին: Սկսենք տարրական դասարանների ուսուցիչների, մանկապարտեզի դաստիարակների, երեխաների հետ աշխատող անձնակազմի, դպրոցների հոգեբանների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբերի և պարզապես այն հոգեբանների վերապատրաստումից, ովքեր ուզում էին մասնակցել և իրենց գիտելիքներն ամրապնդել: ԱՅ ԿԳՄՍՆ նախաձեռնությամբ Երևանից միանգամից երկու տարբեր վերապատրաստողների խումբ այցելեց Արցախ: Մեկը Մանկական զարգացման հիմնադրամն էր, որը երեք շրջաններում՝ Մարտունի, Մարտակերտ, Ասկերան, կազմակերպել է հոգեբանական աջակցություն և միաժամանակ վերապատրաստում: Սթրեսներ ունեցող ուսուցիչը, դաստիարակը մասնակցելով՝ ձեռք են բերել գիտելիքներ, ինչի շնորհիվ հաղթահարել են իրենց խնդիրներն ու պատկերացում կազմել՝ ինչպես աջակցել կողքին: Ծրագիրը, որ հովանավորել են շվեյցարացիները, տևել է մինչև օգոստոս ամիսը: Շահառուները եղել են ոլորտի տեղահանված բնակիչներ, երեխաներ, դեռահասներ, ուսուցիչներ: Սեպտեմբերից ծրագրի շարունակությունը հովանավորել են ֆրանսիացիները: 200-ից ավելի մարդ օգտվել է ծրագրից: Նախարարությունը պայմանագիր է կնքել «Նարնջագույն փողիկ» հոգեբանական զարգացման կենտրոնի հետ, որտեղ կան պրոֆեսիոնալ հոգեբաններ: Ծրագիրը լինելու է շարունակական:

Ինչպես տեղեկանում ենք ԿԳՄՍ նախարարից, պետական նախարարի անմիջական նախաձեռնությամբ խնդիր է դրվել մեկ կետում դնել հոգեբանական աջակցության ծառայությունը՝ ի դեմս Կենտրոնի և մեկ կետից վերահսկել ամբողջ ցանցը: Սա նշանակում է ունենալ պետական մակարդակով հոգեբանական աջակցության կենտրոն, որտեղից կերևա ոչ միայն վերապատրաստումների անհրաժեշտությունը, ոչ միայն խնդիրներ ունեցող երեխաների հետ աշխատանքը, դրանց բաժանումը կլինիկական և կրթամանկավարժական բլոկների, այլ նաև, թե ով է դրամաշնորհներ շահած գալիս Արցախ՝ ծառայություններ առաջարկելու հոգեկան աջակցության կարիք ունեցող բնակչությանը: Երբեմն այստեղ են գալիս նաև ոչ կոմպետենտներ: ԱՅ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարաբանյանն այլևս անհանդուրժելի է համարում դիվերտանտությունը որևէ ոլորտում, իսկ կրթական համակարգում՝ առավելապես:

Հոգեբանական կենտրոնի համար առաջնահերթ կատարվել է մասնագետների վերապատրաստում: Հունիս ամսից ցայսօր ԱՅ առողջապահության նախարարի անմիջական ղեկավարությամբ (Ֆինանսական փոխհատուցումները կատարել է առողջապահության նախարարությունը ԿԳՄՍ-ի հետ համատեղ) վերապատրաստվել է հոգեբանների երկու մեծ խումբ, որոնցից ընտրվել են 20 ուժեղները, և նրանց հետ ցայսօր վերապատրաստումներ են անցկացվում: Նրանք բազային կրթություն ունեցող հոգեբաններ են: Կրթական գերատեսչության ղեկավարը հնարավոր չի համարում մեկ տարում ոչ իմնարար գիտելիքներով գործնական հոգեբաններ պատրաստելը: Ասում է՝ զուցե նա կարող է լինել դեսանտ, այսինքն՝ առաջին օգնություն և խորհրդատվություն ցուցաբերող, բայց ոչ՝ պրոֆեսիոնալ, որն ի վիճակի է մեկ տարի հետո աշխատել հոգեկան խնդիրներ ունեցող անձանց հետ: Վերապատրաստման գործընթացը հետբուհական կրթությունն է, այն շարունակական կրթության բաղադրիչ է:

Հունվարից հետո նախատեսվում է Ստեփանակերտում հոգեբանական կենտրոնի բացումը: Ակնկալվում է, որ այն կլինի երկու բլոկներով՝ մանկավարժահոգեբանական և կլինիկական: Դա նախատեսված է պետական բյուջեով: 2022 թվականի համար տրվել է մանկապարտեզներին հոգեբանի հաստիք տալու գաղափարը, քանի որ ԿԳՄՍ-ն Ազգային ժողով է ներկայացրել «Նախադպրոցական կրթության մասին» օրենքը, որով հստակ ամրագրված է հոգեբանի հաստիքի անհրաժեշտությունը: Ինչո՞ւ: Որովհետև այս տարածքում բաց է մնացել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող հոգեբանական աջակցության աշխատանքը: Այսինքն՝ առավել ունեցող երեխան մտնում է

«ԵՍ»-Ը ԱՐԴԵՆ ՆԱԵՎ ԱՍԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ Ե ԳՈՐԾՈՒՄ

«Ես կարող եմ, հավատում եմ իմ ուժերին»: Երկու տարի է՝ այս նշանաբանով Մարտունու շրջանի Մուշկապատ, Հաղորտի, Խնուշնակ, ավելի ուշ՝ Բերդաշեն գյուղերում գործում են այթի (IT) խմբակներ, որը կազմակերպում է «Ես» կրթական հիմնադրամը՝ ի դեմս նրա տնօրեն, մուշկապատցի Աշոտ Ավանեսյանի: Երիտասարդ, որը IT ոլորտում ունի արժանահավատ անցած ճանապարհ: Անցել է փորձառության այսպիսի ուղի: Ընդունվել է ԱրՊՀ «Կիրառական մաթեմատիկա» մասնագիտություն, 2-րդ կուրսից տեղափոխվել «Սինոֆիս» հայտնի կազմակերպության Ստեփանակերտի կրթական դեպարտամենտ (գործել է երկու տարի), որտեղ ստացել է միկրոէլեկտրոնային սինեմաների նախագծման ինժեներական գիտելիքներ: Տիրապետում է ծրագրավորողի և միկրոինժեների մասնագիտություններին: Աշխատել է «Թուն»-ի, «Արմաթ»-ի աշխատակազմերում, Արցախի տեղեկատվական տեղալուծիչների կենտրոնում՝ փորձագետից մինչև ծրագրերի ղեկավար: Այս բոլոր օղակներն անցնելուց հետո, IT ոլորտում սեփական հայեցակետ ունենալով, որոշում է կայացրել գնալ դեպի գյուղեր: Ստեղծել է «Ես» հավանոտ ամուսնով կրթական հիմնադրամ, որն առաջին հայացքից թվում է եսակենտրոն, բայց այն «Ես» կարող եմ, հավատում եմ իմ ուժերին» բառակապակցության լակոնիկ ձևակերպումն է, որն արտահայտում է նպատակին հասնելու ճանապարհն առանց բոլորին հայտնի մեխանիզմների՝ առանց ծանոթ-բարեկամի, գումարի, միայն հավատալով սեփական ուժերին և քրտնաջան աշխատանք կատարելով: «Ես»-ը տալիս է այդ հնարավորությունը 12-ամյա աշակերտին, որ բացում է իր դուռը:

Ստեփանակերտում ապրողներն ավելի լայն հնարավորություններ ունեն IT գիտելիքներ ձեռք բերելու: Այդ ուղղությամբ այստեղ կա ստեղծված միջապա. գործում են «Թուն», 4-5 «Արմաթ» լաբորատորիաներ, համալսարանները, տարբեր կառույցները նույնպես կազմակերպում են դասընթացներ: «Ես» կրթական հիմնադրամն իր տուրքային գյուղերում քիչ են: Ստեփանակերտում ապրողներն ավելի լայն հնարավորություններ ունեն IT գիտելիքներ ձեռք բերելու: Այդ ուղղությամբ այստեղ կա ստեղծված միջապա. գործում են «Թուն», 4-5 «Արմաթ» լաբորատորիաներ, համալսարանները, տարբեր կառույցները նույնպես կազմակերպում են դասընթացներ: «Ես» կրթական հիմնադրամն իր

մասնագետներ պատրաստելու գործընթացը, որ մենք սկսել ենք, այնքան էլ արագ ստացվող չէ: Հիմնադրամն ընդարձակում է գործունեության սահմանները: Մի կողմից իր աշխարհագրությունն է մեծացնում Մարտունու շրջանում, մյուս կողմից՝ խարխալ է ձգում մայրաքաղաքում: Մեկ ամսից ավելի է, Ստեփանակերտում՝ «Պոլ Էլյուրայի տուն-Ֆրանկոֆոնիա» կենտրոնում «Ես»-ը բացել է IT դպրոց: Հաճախողների տարիքային շերտը սկսվում է 10-12 տարեկանից, բայց սահմանափակում չկա: Ամբողջ տարվա ընթացքում ընդունելություն կա: Համապատասխան մեխանիզմներով նոր ընդունվածները հաղթահարման կուրս են անցնում: 12-15 հոգի հավաքվելու դեպքում նոր խումբ է ձևավորվում: Ա. Ավանեսյանն ասաց, որ խմբերը հիմնականում լրանում են, և 1-2 ամսվա ընթացքում միշտ մի խումբ ավելանում է: Նախնական գործում է երկու խումբ: Մեկում նրանք են, որոնք 0-ից պետք է սկսեն իրենց գիտելիքները զարգացնել: Իսկ որոշակի բազային գիտելիք ունեցող հաճախորդներն առանձին խմբում են: Մեկշաբաթյա ինտենսիվ դասընթացին հաջորդել է զուտ մասնագիտական: Ուղղություններն ավելի շատ կենտրոնացված են մոբայլ՝ հեռախոսային հավելվածների ծրագրավորման, տվյալների գիտության և արհեստական բանականության՝ մեքենայական ուսուցման վրա: Ինչպես տեղեկացանք ղեկավարից, ծրագրավորումից բացի նաև նախապատրաստում են հաջորդ՝ գրաֆիկական դիզայնի ուղղությունը, ապա՝ մարքեթինգը, որը կմեկնարկի հաջորդ տարվա առաջին եռամսյակում: Ուսուցման ժամկետը կախված է տվյալ մասնագիտությունից: Յուրաքանչյուր մասնագիտություն իր նվազագույն գիտելիքը և հմտություններն ունենալու տարբեր ժամ-

կետներ է պահանջում: Ամենակարճ դասընթացը 5-6 ամիս է, ամենաերկար՝ արհեստական բանականության դասընթացը տևում է երեք տարի: Ստեփանակերտում համախոլորների թիվն անցնում է 50 հոգուց: Հիմնադրամը հասել է մի մակարդակի, երբ յուրաքանչյուր բնակավայրում դասընթացը վարում են իր իսկ պատրաստած խմբակավարները, դասընթացավարները: Երբ սկսվեն մասնագիտական դասընթացները, կներգրավեն պրոֆեսիոնալների՝ կարճ ժամկետով դասընթացներ վարելու, որոնք կարող են լինել նաև դրսից: «Ես»-ի հիմնական գործընկերը ԱՅ ԿԳՄՍ նախարարությունն է, Ստեփանակերտի դեպքում՝ նաև Ֆրանկոֆոնիայի կենտրոնը, որը տրամադրել է տարածքը, համակարգչային տեխնիկան: Եթե ընդհանրացնելու լինենք, «Ես»-ի գլխավոր նպատակն է ստեղծել միջավայր և տալ կրթություն, որը լուծելու է մնացած բոլոր խնդիրները: «Կրթությունը երբեք չպիտի լինի ինքնանպատակ: Կրթությունը միջոց է և ոչ թե նպատակ: Այն միջոց է նպատակին հասնելու: Իսկ նպատակն է՝ տալ մասնագետներ, որ ստեղծեն արտահանվող արտադրանք: Այսօր Արցախում չունենք կան ունենք քիչ ծավալով արտահանվող արտադրանք: Միակը, որ մեծ ծավալով արտադրանք կարտահանի, IT ոլորտն է: Համալսարանի, ինտերնետ՝ և աշխատատեղը պատրաստ է: Իսկ պատվերը դրսից է: Սա՝ մեկ: Մյուսը՝ ստեղծել մտավոր ներուժ, որն առաջ կտանի գիտահետազոտությունը: Իսկ սա երկարաժամկետ ծրագիր է, 1-2 տարում չի լինում: Երբ մենք 10-12 տարեկանի հետ սկսում ենք աշխատել՝ տալով մրցունակ գիտելիք, նա իրոք դառնում է մրցունակ, ճկուն, որն ունակ է, պահի խնդիրներից ելնելով, արագ որոշումներ կայացնել, ապրելով իր երկրում՝ դիմագրավել աշխարհի մարտահրավերներին ու համընթաց քայլել նրա հետ»: Ահա իր բաժին գործը Արցախ աշխարհի համար այսպես է ձևակերպում Աշոտ Ավանեսյանն իր մեծ թիմի հետ՝ կրթելով իրենց ուժերին վստահ և ապագայի հանդեպ հավատով լցված սերունդ:



ամբն նպատակ է դրել գյուղում ապրող երեխաների համար էլ լայնորեն բացել SS անսահման աշխարհի դուռը. զարգացման հավասար պայմաններ ու հնարավորություններ ունենալու համար առաջ տանել «Կրթություն՝ առանց սահմանների» ծրագիրը: Վերը նշված գյուղերում ավելի քան 100 երեխա ընդգրկված է «Ես»-ի IT դպրոցներում: Հիմնադրամի մաթիմուն ծրագիրը Մարտունիում տեխնոպարկ ստեղծելն է, բայց դրա համար միանգամից բարձր նշանոց չեն դրել: Իհարկե, յուրաքանչյուր ոք, հատկապես՝ երիտասարդը, պետք է ունենա մեծ երազանք ու գնա դրա հետևից: Աշոտ Ավանեսյանը, իր շուրջը համախմբելով երազավորների մեծ խմբի, բուրգանքի գնում է քայլ առ քայլ՝ ամուր հիմքեր ստեղծելու ճանապարհով, իրատեսորեն մոտենալով նպատակին: - Միանգամից մեծ՝ կենտրոն ունենալու խնդիր չենք դրել: Մեր առաջնահերթ նպատակն է արդյունք գրանցել ու դրա հիման վրա վստահելիություն ձեռք բերել, - պարզաբանում է հիմնադրամի ղեկավարը: - Կենտրոնը կոնկրետ մասնագիտական գիտելիք տալու խնդիր է լուծում, իսկ ուղղակի գրոյական մակարդակից

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՂՐԵՋԱՆԸ՝ ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԹՇՆԱՄԻ»



Լույս է տեսել մատենաշարի առաջին համարը

Այս խորագրով մատենաշարի առաջին համարի լույսընծայման կապակցությամբ դեկտեմբերի 14-ին Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանում (ՄՄՅ)՝ հրավիրվել է մանուկի ասուլիս: Այն անցկացնող՝ ՄՄՅ Կովկասագիտության կենտրոնի տնօրեն, պատմաբան Դավիթ Ավանեսովը տեղեկացրեց, որ մատենաշարը Կովկասագիտության կենտրոնի, Մշակութային ժառանգության պահպանության հանրային խորհրդի և «Գոլոս Արմենիա» հասարակական-քաղաքական անկախ թերթի համատեղ նախագիծն է: Այն ստեղծելու գաղափարը վաղուց կար: Մինչև 2020թ. պատերազմը նախագծի հեղինակները մտածում էին



հանրահռչակել մեր պատմամշակութային ժառանգությունը տարբեր լեզուներով, այդ նպատակով հրատարակել մատենաշար, սակայն պատերազմից հետո ծրագրերը փոքր-ինչ փոփոխության ենթարկեցին՝ առաջնահերթությունը տալով Աղբյուրի կողմից Արցախի օկուպացված տարածքներում գտնվող մշակութային ժառանգությանը: Մատենաշարի շրջանակներում պարբերաբար կներկայացվեն այդ պատմամշակութային հուշարձանների նախկին և ներկայիս վիճակները՝ սկսած ոչնչացումից, ավարտած՝ դրանց յուրացումով: Նախագծի կազմակերպիչները պարբերաբար կանդրադառնան ոչ միայն Արցախի օկուպացված բնակավայրերի մեր պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրներին, այլև առհասարակ՝ 1918թ. արհեստածին Աղբյուրան կոչված պետության ստեղծման ժամանակից մինչև մեր օրերն իրականացված մշակութային ցեղասպանություններին: Նպատակը մեկն է՝ ստույգ փաստերի հիման վրա աշխատել ներկայացնել, որ Աղբյուրան, իրոք, քաղաքակրթության թշնամի է, որ «քաղաքակրթություն» և «Աղբյուրան» անուններն իրար հետ անհամատեղելի են, քանի որ Աղբյուրան տարիներ շարունակ յուրացնում ու ոչնչացնում է ոչ միայն հայկական պատմամշակութային ժառանգությունը, այլև՝ ողջ քրիստոնեական և այլ մշակութային ժառանգություններ: Շուշիի մզկիթը, որ Ալիևի բոլոր ապօրինի այցերի ընթացքում գոյազրկվում է, պատերազմի ընթացքում դիտավորյալ մի քանի անգամ թիրախավորվել է ազերիների կողմից: Նպատակը մեկն էր՝ պայթեցնել Շուշիի մզկիթը, և այդ ամենի մեղավորությունը բարդեին հայերի վրա: Դ.Ավանեսովը նշեց, որ իրենց կողմից բազմաթիվ փաստեր են հավաքվել այն մասին, որ Աղբյուրանցիները վայրագություններ են արել նաև օկուպացված տարածքներում գտնվող սեփական գերեզմանների նկատմամբ՝ քանդելով դրանք ու այդ ամենը վերագրելով հայերին: Դա ապացուցում են լուսանկարներն ու տեսագրությունները, որտեղ պատկերված են

իր հայերի կողմից արված վայրագությունները, սակայն դրանցում հստակ երևում է, որ դա չի կարող արված լինել մեկ կամ մի քանի տարի առաջ: Դա արված է ընդամենը մի քանի ամսվա ընթացքում, քանզի այդ դեպքերի հետքերը քարերի վրա հստակ երևում են:

Մշակութային վանդալիզմը Աղբյուրանում պետական մակարդակի վրա դրված քաղաքականություն է

Պատմաբանն արձանագրում է նաև, որ պատերազմի առաջին իսկ իսկ օրերից հայկական պատմամշակութային ժառանգության օբյեկտները գտնվել են թուրք-աղբյուրանական ահաբեկչական տանդեմի թիրախի տակ: Դրանք բազմաթիվ անգամ թիրախավորվել են Աղբյուրանի ՋՈՒ-ի կողմից: Դրա վառ ապացույցն է Շուշիի Դազանչեցոց սուրբ Աննափրկչի եկեղեցին, որը մեկ օրվա ընթացքում ընդամենը մի քանի ժամվա տարբերությամբ թիրախավորվել է մի քանի անգամ, ընդ որում՝ գերծշգրիտ զենքով: Ու մնանա՞տիպ դեպքերը բազմիցս են եղել ողջ պատերազմի ընթացքում: Պատերազմի ժամանակ թիրախավորվել են նաև հերոսներին նվիրված քանդակները, հատկապես՝ Արցախյան առաջին պատերազմի: Մի քանի անգամ Մարտունիում թիրախավորվել է Մոնթեի արձանը: Բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ պատերազմի ժամանակ թիրախավորվել են Զայրենական մեծ պատերազմի հերոսներին նվիրված հուշարձանները: Էլ չենք խոսում, որ Շուշիում այս ամենից բացի թիրախավորվել են Գուշահամալիկի տարածքում գտնվող՝ 1920թ. ջարդերին և Զայրոց ցեղասպանության անմեղ զոհերին նվիրված հուշակոթողները: Այս ամենն ապացուցում է, որ Աղբյուրանը վարել է պատերազմ քաղաքակրթության դեմ: Նպատակը մեկն էր՝ հնարավորինս ոչնչացնել այն ամենը, ինչ հայկական է:

Իսկ պատերազմից հետո սկսվել է Աղբյուրանի կողմից այլ քաղաքականություն հայկական մշակութային ժառանգության նկատմամբ: Առաջինը մեր պատմամշակութային ժառանգության աղվանականացման քաղաքականությունն է: Սա նոր չէ, ընդամենը նոր թափ են տվել: Եթե խորհրդային ժամանակաշրջանում Աղբյուրանցիները միայն Գանձասարի, Դադի-



վանքի ու Ծիծեռնավանքի մասին էին խոսում իր աղվանական մշակույթի պատկանող, ապա վերջին ժամանակահատվածում աղվանականացման տակ մտել են նաև Ամարասի վանական համալիրը, Զադրուփի շրջանի բոլոր պատմամշարտարապետական հուշարձանները: Ընդ որում, երբ պատերազմից հետո Աղբյուրանի՝ ռազմական հանցագործ այդ երկրի ղեկավարն այցելել է Զադրուփի և մնացած օկուպացված շրջաններ, համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչներին բացահայտ հրամայել է հեռացնել հայկական

արձանագրությունները բոլոր պատմամշարտարապետական հուշարձաններից (այդ մասին տեսագրությունը կա, որը տարբեր լեզուներով տարածվել է): Դա խոսում է այն մասին, որ մշակութային վանդալիզմը Աղբյուրանում պետական մակարդակի վրա դրված քաղաքականություն է և իրականացվում է այդ երկրի նախագահի անմիջական հովանավորությամբ:

Միջազգային կազմակերպությունների թողտվությամբ

Իհարկե, չպետք է անտեսել, որ այս ամենը տեղի է ունենում միջազգային կազմակերպությունների թողտվության պայմաններում: Երբ պատերազմի ժամանակ տարբեր խողովակներով այս ամենը բազմիցս ներկայացվել է միջազգային տարբեր կառույցներին, ԱԶ և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակների մի քանի գեկույցների տեսքով նաև, միջազգային կազմակերպությունների կողմից չի արվել և հիմա էլ չի արվում որևէ արձանագրություն կամ որևէ հստակ քայլ այդ ամենի դեմն առնելու առնչությամբ: Ու դա համագեղել է նրան, որ ամենօրյա պարբերականությամբ մեր օկուպացված բնակավայրերում տեսնում ենք մեր պատմամշակութային ժառանգության ոչնչացումը: Դա դեռ բավական չէ, վերջերս Աղբյուրանը չորս տարի ժամկետով ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի այն համաձայնագրովի մշտական անդամ, որը պետք է հետևի պատերազմի և

զինված հակամարտությունների դեպքում պատմամշակութային ժառանգության պահպանմանը կամ իբր դրանք ոչնչացման երևույթներից զերծ պահելուն: Դա կանաչափ է, որ այդ կառույցներն առաջնորդվում են ֆինանսական ռեսուրսներով և ոչ թե առաջնությունը տալիս են մշակութային ժառանգության պահպանմանը, ու որոշ կառույցներ անգամ վերածվել են քաղաքական հարթակների: Եթե այդպես չլիներ, ապա նրանք կոնկրետ քայլեր կձեռնարկեին, որ չկրկնվեր այն ամենը, ինչ եղել է Զուղայում, որտեղ ոչնչացվել են հայկական մշակութային ժառանգության հազարավոր նմուշներ:

Սա համայն քրիստոնյա աշխարհի խնդիրն է

Մենք պետք է հստակ արձանագրենք մի հանգամանք ևս. պատմամշակութային հուշարձանները, որոնք օկուպացված բնակավայրերում ոչնչացվել են կամ վտանգի տակ են, միայն հայկական մշակութային ժառանգությանը չեն պատկանում: Այս ամենի մասին բարձրաձայնելն ու վայրագությունների դեմն առնելը համայն քրիստոնյա աշխարհի խնդիրն է, քանի որ այս ամենը նաև համամարդկային, համաշխարհային քաղաքակրթության բաղկացուցիչ մասն է. այդ հուշարձանները համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցներ են, որոնց մասին խոսում են նաև օտարերկրյա մասնագետները:

Աղբյուրանը ոչ միայն ոչնչացնում, նաև սեփականում է

Մյուս խնդիրը վերաբերում է մեր բռնադատված բնակավայրերում գտնվող թանգարանային ժառանգությանը: Այն արժեքները, որ հնարավոր չի եղել տարհանել պատերազմի ժամանակ, հատկապես՝ Շուշիից և Զադրուփի շրջանից ու մնացել են օկուպացված բնակավայրերում, յուրացվել են Աղբյուրանի կողմից, որոշները տեղափոխվել են Բաքու և ցուցադրության են ներկայացվում որպես Աղբյուրանի մշակույթի մաս: Ավելին, Շուշիի գորգերի և

կերպարվեստի թանգարանների տեղում համանման կառույց Աղբյուրանը բացել է, ընդ որում, այնտեղ ցուցադրված գորգերի գերակշիռ մասը հայկական է, որ դեռևս խորհրդային ժամանակահատվածում Աղբյուրանցիները հավաքել են Արցախի տարբեր բնակավայրերից՝ որոշ դեպքերում խաբեությամբ, մարդկանց տալով շուկայականից ցածր գներ կամ փոխարենը տալով գործարանային պայմաններում պատրաստված և մշակութային արժեք չներկայացնող համանման գորգեր:

Հանրայնացնել բոլոր միջոցներով

Այդ ամենի մասին մենք չպետք է խոսենք միայն մեկ օր կամ առիթից առիթ: Եթե ուզում ենք հասնել խորը և լուրջ արդյունքի, պետք է այս ամենի մասին խոսենք ամենուր: Ընդ որում, ոչ միայն պիտի խոսել, այլև դրա դեմն առնել իրավական ճանապարհով:



Դ. Ավանեսովը տեղեկացրեց, որ այս մատենաշարը չի լինելու միայն ռուսերեն: Թարգմանվելու է մի քանի լեզուներով, և շուտով կլինեն նաև օտարալեզու տարբերակները, այդ թվում՝ էլեկտրոնային:

Այս ամենի հանրայնացման գործում մեծ անելիքներ ունեն նաև լրատվամիջոցները: Մեր ցանկացած հուշարձանի մասին թեկուզ հակիրճ տեղեկատվություն պետք է դրվի սոցցանցերում մի քանի լեզուներով, որպեսզի դրանք միջազգայնացնելը ավելի հեշտ լինի:

Առանձին թեմա է Զայրենական մեծ պատերազմի հերոսներին և զոհվածներին նվիրված հուշարձանների պահպանությունը: Այս թեմայի մասին ռուսական տարբեր պետական հարթակներից պարբերաբար խոսվում է: Արցախի օկուպացված բնակավայրերում, սակայն այս հուշարձանները ևս զոհ են դառնում Աղբյուրանական վանդալիզմին: Ուրեմն՝ այդ ուղղությամբ աշխատանք պետք է տարվի նաև ռուս խաղաղապահների հետ:

Այսօր և վաղը

Օրվա միջոցառմանը, հատկապես նրա կազմակերպիչ, պատմաբան Դավիթ Ավանեսովի հետևողական աշխատանքին բարձր գնահատական տալով՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանը նշեց, որ քանի դեռ Աղբյուրանի բացահայտ ցեղասպան քաղաքականությունը շարունակվում է և առավելապես՝ մշակույթի ասպարեզում, ինչը նշանակում է մեր ժողովրդի պատմական անցյալի ժխտում, հայ ժողովրդի հետքերի ջնջում, հետևաբար խիստ անհրաժեշտ է անգամ յուրաքանչյուր փոքր հուշարձանի մասին գրել, նկարել, ցուցադրել և համձնել զալիք սերունդներին: Նրա խոսքով, պատմությունը զիզգազ է, և նա հավատացած է, որ մեր ժողովրդի զալիք սերունդները, առանձնապես՝ գիտական և զինվորական, ձգտելու են վերադարձնել մշակութային այն ժառանգությունը, որն ապացուցում է մեր ժողովրդի և պատմական անցյալը, և պատմական տարածքները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՉԱՆՔԵՐ ԳՊԻՏԻ ԽՆԱՅԵՆՔ՝ ԱՇԽԱՐՀԻՆ ՃՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԵՐ ԹՃՆԱՄՈՒ ԻՐԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ



Հարցազրույց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Բորիս ԳԱՍՊՐՅԱՆԻ հետ

- Պարոն Դազարյան, հաճախ եք լինում Արցախում, մասնավորապես՝ Արցախի գիտական կենտրոնում: Կապը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի և Արցախի գիտական կառույցի միջև ինչպե՞ս կզմայտանա:

- Արցախ այցելել եմ բազմաթիվ անգամ, բայց, ցավով պիտի նշեմ, որ պատերազմից հետո սա առաջինն է: Մեր այս այցը ես չափազանց կարևոր եմ գնահատում և ոչ ինքնապատակ. եկել ենք կոնկրետ առաջարկություններով և ծրագրերով: Հույս ունենք, որ Արցախում ակնկալվող մեր համընդհանրությունը, մեր նախաձեռնած ծրագրերը կողջունվեն և կիրառվեն: Համոզված ենք՝ դրանք իրականացվելու դեպքում արդյունքը գոհացուցիչ կլինի: Մենք բոլորս՝ գիտնականներ, գիտական կառույցների ղեկավարներ, նախարարներ, պատմաբաններ և ընդհանրապես ամբողջ հայ ազգը, պարտավոր ենք այնպես անել, որ Արցախի գիտական կառույցը դառնա հզոր կենտրոն հայ ժողովրդի համար:

Ամեն անգամ Արցախ կատարած այցս մեծ լիցք է հաղորդում ինձ նաև գիտական առումով: Արցախն ինձ համար երկրորդ հայրենիք է: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան վաղուց կապեր ունի Արցախի գիտական կենտրոնի հետ, բայց Արևելագիտության ինստիտուտը լուրջ համագործակցություն չի ունեցել: Ներկայում ստորագրված Հուշագիրը հնարավորություն կտա այն բոլոր ուղղությունները, որ զարգացնում ենք ՀՀ ԳԱԱ-ում, զարգացնել նաև այստեղ՝ Արցախում: Արդեն հասցրել ենք համընդհանուր ուսանողների հետ, հետաքրքրվել ենք՝ ինչ է պետք, ինչի կարիք ունեն, ինչ կուզենային ունենալ... Մենք փաստաթղթային տեսքի կրթություն այդ ամենը և կծագենք Արցախում՝ բոլոր ուղղությունում, գիտությունը ծառայեցնել երկրի զարգացմանն ու խաղաղությանը: Լիափոխ եմ, որ Արցախի գիտական կենտրոնում դրամաշնորհային միջոցներով տարբեր թեմաներով հետազոտություններ կկատարվեն: ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան՝ ի դեմս պարոն Սարգսյանի, ինչպես նաև մեր ինստիտուտների ղեկավարները պատրաստակամ են հնարավորությունների սահմաններում օգնակցել Արցախի գիտական կառույցին:

- Որո՞նք են Արևելագիտության ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները:

- Մեր ծավալը և Միջին Արևելքի, Արևելյան Ասիայի պատմությունը, մշակույթ, ժամանակակից տարածաշրջանային հիմնախնդիրներ,

- Օսմանյան կայսրության և Թուրքիայի հանրապետության պատմության, ներքին և արտաքին քաղաքականության, սոցիալ-տնտեսական դրության, ցեղասպանության քաղաքականության, գաղափարական հոսանքների և այլ համագույսային հարցերի լուսաբանում,

- արաբական երկրների ազգային-ազատագրական շարժումների, նրանց սոցիալ-քաղաքական և հոգևոր-մշակութային զարգացման ուղիների, միջարաբական, ինչպես նաև հայ-արաբական պատմաքաղաքական հարաբերությունների, իսլամի դերի և այդ երկրներում հայ համայնքների պատմության ուսումնասիրություն,

- Իրանի պատմություն, ներքին և արտաքին քաղաքականություն, իրանական բանասիրություն և հայ-իրանական պատմամշակութային հարաբերություններ,

- քրդերի, նրանց պատմության, բանասիրության, հայ-քրդական փոխհարաբերությունների ուսումնասիրություն,

- քրիստոնյա Արևելքի, Աղվանքի, հայ-բյուզանդական քաղաքական-դավանական հարաբերությունների, հայ-վրացական փոխհարաբերությունների պատմության հարցեր,

- սեպագիր և հելլենիստական քաղաքակրթությունների պատմության և մշակույթի հանգուցային հարցերի ուսումնասիրություն,

- արևելյան աղբյուրների, վավերագրերի հետազոտություն և դրանց հայերեն թարգմանություն և այլն:

Մյանք են այն հիմնական ուղղությունները, որոնց ուղղությամբ ինստիտուտում ամենօրյա աշխատանք է տարվում:

Գիտական նվաճումների առումով ունենք 450-ից ավել մենագրական աշխատություններ և ժողովածուներ, մի քանի հազարի հասնող գիտական հոդվածներ:

- Հայտնի է, որ թշնամի մեր հակառակորդը, հայերեն է սովորեցնում իրենց երեխաներին դեռևս տարրական դասարաններից: Ըստ Ձեզ՝ մենք այդ առումով խնդիր, անելիք չունենք: Վերջին պատերազմը հատկապես ցույց տվեց, որ պարտության մի պատճառն էլ ինչ-որ տեղ դա է: Փաստեր կան, որ պարզ հայերենով խոսող թուրք զինվորներ շատ են եղել հայկական տարածքներում...

- Այդ թեման մեր գործընկերների հետ քննարկել ենք մինչև Արցախ գալը: Ցավոք, մեր հասարակությունը տարիներ շարունակ մոռացել էր, որ թշնամուն պետք է լավ ուսումնասիրել, այլ ոչ թե միայն վերացական պատկերացում ունենալ նրա մասին: Նկատի ունեն ոչ միայն պատմությունը, այլ ընդհանրապես իրենց հասարակության շրջանում տիրող իրավիճակը, տեղի ունեցող իրադարձությունները, բաժանումներն ու շերտավորումները՝

անկախ այն բանից՝ դավանական են, թե՞ կրոնական: Անշուշտ, անհրաժեշտ է ուսումնասիրել և սովորել աղբյուրներն լեզուն: Մեզ մոտ՝ Հայաստանում թուրքագիտությունը միշտ էլ բավարար մակարդակի վրա է գտնվել և լավ էլ զարգացել է, ունենք նաև աղբյուրազանգեղներ, բայց, այսպես ասած, Աղբյուրների գծով առանձին կենտրոն չկա, չի գործում: Մեր ինստիտուտում վերջին տարիներին սկսեցինք աղբյուրներն ուսուցման հետ կապված աշխատանքներ տանել, ունենք ասպիրանտներ, որոնք պաշտպանել են հենց աղբյուրներն իրենց գծով: Նախատեսում ենք նաև հրատարակել Աղբյուրներ կոչված պետության մասին մի ամբողջ ակադեմիական գիրք, որը մինչև օրս չունենք, և որը կընդգրկի այդ պետության ստեղծման օրվանից մինչև օրս տեղի ունեցող գործընթացները: Մենք պարտավոր ենք դա անել, ուսումնասիրել, և լիափոխ եմ, որ Արցախի երիտասարդների հետ մեր աշխատանքն առաջիկայում կլինի հենց այդ ուղղությամբ: Այսօր այստեղ՝ Արցախի գիտական կենտրոնում երիտասարդ աշխատողների հետ հանդիպման ժամանակ քննարկեցինք այդ թեման, և գոհունակությամբ ուզում եմ փաստել, որ երիտասարդներից մեկը շատ լավ տիրապետում է աղբյուրներին:

Ըստ իս, Արցախում նույնիսկ ուշացել են աղբյուրագիտության ուսումնասիրման առումով. այստեղ այդ գործընթացը պետք է սկսվեր դեռևս 1990-ականներին: Ձինդարար կնքվեց, բայց պատերազմը փաստացի չէր ավարտվել, և չպիտի հանգստանայինք ու ձեռքներս ծալած նստեինք: Ով ով՝ արցախցիները լավ գիտեն, թե թուրքն ինչի է ընդունակ և 1994-ի սկզբներից էլ պետք է ձեռնամուխ լինեին այդ գործին: Չեն ատում, թե աշխատանք այդ ուղղությամբ ամենևին չի տարվել, բայց արվածը բավարար չէր թշնամուն հակադեմոստրացիան: Ի տարբերություն հակառակորդի՝ մենք մի շարք առումներով պատրաստ չէինք, այդ թվում՝ լեզվի, մեր պատմության ուսումնասիրության: Դրանում ներկա պահին մեղավորներ փնտրելն անօգուտ է, և այժմ որ պահից էլ սկսենք գործընթացը, էլի շահած կլինենք: Պատերազմը դեռ չի ավարտվել, իսկ մեր հարևաններն էլ համկարծակի չեն անհետանալու մեր կողքից:

- Հիրավի, ոչ միայն չեն անհետանալու, այլև շարունակում են և կշարունակեն ոչնչացնել մեր պատմամշակութային արժեքները, կեղծել պատմությունը՝ ինչպես ժամանակին Ջիա Բուճիաթովն էր անում իր սերնդակիցների հետ միասին:

- Դա թուրքական ձեռագիր է: Ի վերջո, Աղբյուրներ կոչվածը Թուրքիայի կողմից ստեղծված պետություն է, և, բնականաբար, այն ժամանակ էլ այն թուրքական պետության բոլոր բացասական կողմերը: Իսկ հայկականության ոչնչացումը թուրքական պետության քաղաքականության ուղղություններից մեկն է: Նրանք ամեն կերպ ուզում են աշխարհից ապացուցել, թե այստեղ հայեր չեն եղել, որ ամեն ինչ իրենցն է և այլն: Հին

Ջուղայի խաչքարերի ոչնչացումը, վանդալիզմը հենց դրա դասական օրինակներից է: Նույնն է արվում այսօր Շուշիում և Աղբյուրների կողմից օկուպացված մյուս տարածքներում, Փանծակում, Շահունյանի շրջանում... Թեկուզ հենց Բաքվում. չէ՞ որ Բաքուն ի վերջո աղբյուրազանգեղ քաղաք չէ: Թուրքական բանակի միջոցով այն դարձավ աղբյուրազանգեղ: Հայկական հետքն այնտեղ և վերացրել են, ու մնացել է միայն մեկ եկեղեցի (երևի թե առանց խաչի), որն էլ գրադարան են դարձրել... Իսկ դա էլ հատուկ քաղաքականություն է՝ աշխարհին ցույց տալու, թե իբր, տեսեք, մենք այնքան բարյացակամ ենք, որ մեր մայրաքաղաքում հայկական եկեղեցի ենք պահում:

- Պայքարի ի՞նչ միջոցներ են կիրառվում այդ ամենի դեմ անելու համար:

- Արևելագիտության մեր ինստիտուտը տարբեր խողովակներով աշխարհի տարբեր երկրների տրամադրել է Արցախի եկեղեցու, Ալբանից երկրի եկեղեցու, Հայոց պատմության, Հայոց արևելից կողմանց պատմության վերաբերյալ տարբեր լեզուներով նյութեր: Բացի այդ, ունենք անգլալեզու հրատարակություններ, որոնք ևս տարածում ենք նույն ձևով, ու եթե փորձագետների կարիք էլ է լինում՝ տրամադրում ենք նաև փորձագետներ: Մենք համոզված ենք, որ որևէ լուրջ գիտնական նրանց ասածը որպես ճշմարտություն չի ընդունի, բայց, իհարկե, մենք դրանով չպիտի հանգստանանք ու մեր պայքարը պետք է շարունակենք կեղծիքի դեմ: Մենք պետք է ապացուցենք, որ իրենց ասածն անհեթեթություն է, ճշմարտությունը մեր կողմն է, փաստաթղթերը մեր ձեռքի տակ են: Պարզապես պետք է կարողանանք շատ արագ ճշմարտությունը իրանցնել աշխարհին: Ցավոք, իրենք հասել են այն բանին, որ աշխարհի մի շարք տեղերում բացել են նաև աղբյուրագիտական ամբիոններ, իրենց կողմից շատ մեծ գումարներ են խաղաղվում՝ սուտը տարածելու համար, և մասամբ այդ սուտն ամուր է իր գործը... Բայց մենք ջանքեր չպիտի խնայենք՝ աշխարհին ցույց տալու նրանց իրական կերպարը:

- Ձեր ասելիքն արցախցիներին:

- Բարձրագույն խոսքեր ասելու նպատակ չունեն: Կուզեի ասել հետևյալը. եկեք ամեն մեկս մեր տեղում ամենք մեր գործը: Մենք այլընտրանք չունենք. թե՛ արևմուտքից, և թե՛ արևելքից շրջապատված ենք թշնամական պետություններով, և, կրկնում են, նրանք չեն անհետանալու մեր կողքից: Մենք պետք է միշտ պատրաստ լինենք նրանց ամեն մի ոտնձգության: Ապացուցված է, որ աշխարհը մեզ չի օգնելու, աշխարհը նրանց է օգնելու: Մենք մեր հույսը մեզ վրա պիտի դնենք, և փորձենք գոնե եղած ռեսուրսները ճիշտ նպատակին օգտագործել: Թշնամուց դասեր քաղելն էլ ամոք բան չէ. հուսով եմ՝ սրանով ամեն ինչ դեռ ավարտված չէ, և մենք կամաց-կամաց կշտկենք մեր մեջքը ու կհասնենք մեր վերջնականությանին:

Լաուրա ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՑԱՒՅԻ ԳԻՏԱԿԱՆԸ՝ «100 ԳԱՂԱՓԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ» ՄՐՅՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ

Ամփոփվեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված՝ «100 գաղափար Հայաստանի համար» նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների մրցույթի արդյունքները, որին մասնակցել և հաղթող է ճանաչվել Արցախի գիտական կենտրոնի փոխտնօրեն, կենսաբանական գիտությունների թեկնածու Արև Իսրայելյանը:

Մրցույթին ներկայացրած թեման գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկի՝ անասնապահության զարգացման



վերաբերյալ էր՝ «Անասնակերների (սիլոս) փոքրածավալ արտադրության մոդ տեխնոլոգիայի մշակում» վերտառությամբ:

Հարկ է նշել, որ Արցախի գիտական կենտրոնի գիտաշխատողները մեկ անգամ չէ, որ մասնակցել են տարաբնույթ մրցույթների ու գրեթե ամեն անգամ մրցանակային



տեղեր են զբաղեցրել: Այս անգամ մրցույթն անցկացվել է հետևյալ՝ ֆիզիկամաթեմատիկական, քիմիական, կենսաբանական, տեխնիկական, գյուղատնտեսական, պատմական, տնտեսագիտական, բանասիրական, իրավաբանական, մանկավարժական, բժշկական, դեղագործական, արվեստագիտական, ճարտարապետական, հոգեբանական, ռազմական, սոցիոլոգիական, քաղաքական և տեղեկատվական տեխնոլոգիաների գիտությունների վերաբերյալ անվանակարգերում, ինչպես նաև՝ «Գիտություններ երկրի մասին» անվանակարգում:

«100 գաղափար Հայաստանի համար» մրցույթի նպատակն է զարգացնել երիտասարդների նորարարական մտածողությունը, ներգրավել երիտասարդներին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում, խթանել գիտատեխնիկական մշակումներն ու նորարարական նախագծերի իրականացումը քաղաքացիական նախաձեռնություններով: Հայտարարված 20 անվանակարգերում ներկայացվել է 137 հայտ, որն անմախաղեպ բանակ է մրցույթի պատմության մեջ:

ԱՂ ԿԳՄՄ

ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ


ՈՒՍՈՒՑԻՉ ԸՆԴՀԱՆՈՒՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱ ՈՉ ՄԻԱՅՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՈՎ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ԱՅԼԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱԶԽԱՏԱՎԱՐՁՈՎ

Երբ խոսվում է մանկավարժի մասնագիտության նկատմամբ երիտասարդների շրջանում նվազ հետաքրքրության, դպրոցներում ուսուցիչների թափուր տեղերը դժվարությամբ համալրելու (հաճախ էլ չհամալրելու) մասին, պատճառը հիմնականում բացատրվում է նրանց ցածր աշխատավարձով: Պետության քայլերն այս ուղղությամբ կտրուկ չեն, բայց չենք կարող ասել, որ ընդհանրապես չեն արվում: Դրանցից մեկն էլ ուսուցիչների սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորումն է, որը ՀՀ-ում անցկացվեց այս տարվա սեպտեմբերին հայտ լեզու, հայոց պատմություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն առարկաներից 7-12-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների շրջանում: Ատեստավորումն անցկացվել է թեստերի միջոցով: Կարգն այսպիսին է. առաջադրանքները 90-100%-ով լուծելու դեպքում ուսուցիչը հավելավճար է ստանում աշխատավարձի 50%-ի չափով, 80-89% արդյունքի դեպքում՝ 40%-ով, 70-79%-ի դեպքում՝ 30%-ով, իսկ 60-69% արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորումն անցած՝ աշխատավարձի պահպանումով:

Կամավոր ատեստավորման հայտ ներկայացրած 1372 ուսուցիչներից մասնակցել է 996-ը, որից 481-ին է հաջողվել 30-50%-ի չափով բարձրացնել աշխատավարձը հինգ տարվա կտրվածքով: ՀՀ-ում կատարվող կրթական բարեփոխումները հիմնականում (որոշ փոփոխություններով) փոխադրվում են Արցախի պայմանավորված մեկ միասնական կրթական դաշտում լինելու հանգամանքով: Արցախում ուսուցիչների կամավոր ատեստավորումն անցկացնելու հաջող տարվա մասին: Ինչքան որ ընդհանրապես չեն արվում համաժողովում: Նրա վերլուծությանը՝ կամավոր ատեստավորման ժամանակ հիմնականում լավ արդյունք են ցուցաբերել կրկնուսուցմամբ զբաղվող ուսուցիչները: «Ուսուցչի գործը դասարանում դասավանդելն է: Պետությունը նրան աշխատավարձ է տալիս, որ դասի ժամանակ գիտելիք տա, ոչ թե կրկնուսուցման, որի համար ծնողն է նրան աշխատավարձ տալիս: Բայց մենք խառնել ենք այդ հասկացությունները»:

Անհետք է և հետևյալ դեպքը. մեկ սխալ լուծած առաջադրանքի պատճառով ուսուցչի հավելավճարը միանգամից 10 տոկոսով տարբերություն է տալիս մեկ առաջադրանք ավել կատարած ուսուցչի համեմատ: Արցախի փորձագետը դա սխալ մոտեցում է համարում՝ մշտնապես կրկնուսուցումը դա սխալ մոտեցում է համարում՝ մշտնապես կրկնուսուցումը չի օգտակար լինում, որ պատահականությունը լրիվ պետք է բացառվի այդ գործընթացում:

Իսկ ինչո՞ւ է խտրականություն ցուցաբերվել առարկաների նկատմամբ. տարրականի, կերպարվեստ, ֆիզկուլտուրա, երգերաժողովրդագրություն, տեխնոլոգիա առարկաների ուսուցիչները ինչո՞ւ չեն ընդգրկվել ատեստավորման ցանկում: Իսկ թեստերով ինչպե՞ս ստուգել այս առարկաները դասավանդողներին: Խնդիրները, թերությունները մատնանշելը կարևոր է, երբ դրա հետ մեկտեղ նաև լուծման առաջարկություններ են արվում: Յու. Քարամյանն այս առումով իր ուրույն կարծիքն ունի. եթե հարկ է, որ ուսուցչի գիտելիքը ստուգվի, դա պետք է արվի ոչ թե տոկոսներով, այլ չափորոշիչներով: Ծեմ սահմանվի տարրական, հիմնա-



ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ

Շնորհավորանք ԿՈՉՄԱՆՆ ԱՐԺԱՆԻ



Ուսուցիչների ամբողջ հպարտությունն աշակերտների մեջ է, իրենց ցանած սերմերի մեջ:

Դժվար է պատկերացնել մեր երկրի ապագան առանց բանիմաց, հմուտ, ազգամկեր և հայրենասեր ուսուցիչների: Այսօր մենք առաքելություն ունի կատարելու ուսուցիչը: Նա է կրթում, հայեցի ոգով դաստիարակում մատաղ սերունդին: Հենց այդպիսի առաքելությամբ է օժտված Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Կարինե Իշխանյանը: Օրերս լրացավ սիրելի գործընկերոջ 50-ամյակը: Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը սրտանց շնորհավորում է հմուտ մանկավարժի, հավատարիմ գործընկերոջ, Արցախի ու արցախյան ցավով մտահոգ, հայրենասեր ու ազնիվ հոգու տեր անձնավորության հորեյանը, ցանկանում նրան բեղմնավոր աշխատանք, նոր եռանդ և ուժ: Կարինե Իշխանյանը ծնվել է 1971թ. դեկտեմբերի 1-ին Մարտունու շրջանի Նորշեն գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում, աշխատանքի է անցել քաղաքի հ. 2 դպրոցում և առայսօր աշխատում է որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Նա ղեկավարում է հայոց լեզվի և գրականության մեթոդիկական աշխատանքները: Կ. Իշխանյանը ծնվել է մանկավարժի ընտանիքում և մանկուց ծանոթ է ուսուցչի ծանր ու պատասխանատու աշխատանքին: Մանկավարժական գործունեության ընթացքում նա հավատարիմ է մնում իր սկզբունքներին. աշակերտների մեջ սեր սերմանել մայրենի լեզվի, գրականության, մշակույթի, հայրենիքի համոզմունք: Մայրենի լեզվի նկատմամբ սեր փոխանցվել է նրա աշակերտներից շատերին, որոնք էլ հետագայում ընտրել են ուսուցչի մասնագիտությունը: Կարինե Իշխանյանն ունի կազմակերպչական մեծ ջիղ, բազմաթիվ միջոցառումների հեղինակ է: Նրա աշակերտները հաջողությունների են հասել օլիմպիադաներում, շարադրությունների մրցույթներում: Բազմամյա փորձ ունեցող ուսուցչուհին սիրված ու հարգված է գործընկերների, աշակերտների, ծնողական հասարակության կողմից: Նա օժտված է մարդկային վեհ հատկանիշներով, սատար է կանգնում երիտասարդ ուսուցիչներին՝ նրանց փոխանցելով իր փորձն ու գիտելիքները: Մեր սիրելի՜ գործընկեր տիկին Իշխանյան, Ձեզ մանկավարժական ու ստեղծագործական նորանոր թռիչքներ ենք մաղթում, իսկ Արցախին՝ հարատև խաղաղություն, որ շնորհալի մանկավարժի Ձեր գործունեությունը շարունակվեք հարազատ հայրենիքում: Թող կյանքը հաճելի անակնկալներ պարգևի Ձեզ:

Մասնագետը հեղինակություն պետք է ունենա ոչ միայն իր գիտելիքներով, ունակություններով, այլև ստացած աշխատավարձով: «Մենք տնտեսում ենք անուն ուսուցչի աշխատավարձի վրա, բայց հետագայում միլիարդներ ենք կորցնում իրական կյանքում»,- ասում է մասնագետը՝ ակնարկելով նաև այն մասին, որ բարեփոխումները համակարգված և համակողմանի չեն արվում՝ նախադպրոցականից մինչև մասնագետ պատրաստելը: Վերցնում են նրա երևացող մասը, որն արդեն վտանգի տակ է: Երբ արդեն տեսան ուսուցիչ չկա, այդ ժամանակ սկսեցին մտածել նրա մասին: Արցախում հնարավոր է ՀՀ-ից տարբեր որոշում ընդունել: Յու. Քարամյանը դա միանգամայն հնարավոր է համարում: Ի դեպ, Արցախի ԳԹԿ-ն բուհական քննությունների մրցույթը տարիներ շարունակ իր ձևով է անցկացնում, որին այս տարի հետևել է ՀՀ-ն: Ուսուցիչների կամավոր ատեստավորման պարագայում էլ կարող են անել այն, ինչ այստեղ ճիշտ են համարում: **Ս. ԽԱԶՆՏՐՅԱՆ** *Խմբագրության կողմից.* «Լուսարար»-ը այս թեմայի շուրջ հանրային քննարկման է հրավիրում մանկավարժներին, շահագրգիռ անձանց:

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՏԵՍԱԿԵՏ

ԳՊՐՈՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ. ՈՐՏԵՂ ՊԵՏՔ Է ՓԵՏՐԵԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթական համակարգի հիմնահարցերին՝ կրթության, դաստիարակության ոլորտների բարեփոխումներին անդրադառնալով՝ իմ հոդվածներում ես ակամայից շեշտադրում էի դրանց լուծման որոշակի ուղիներ (իմ տեսանկյունից): Այս անգամ նպատակ ունեմ անդրադարձ կատարել հանրակրթական դպրոցում առկա խնդիրներից մեկի՝ դպրոցի կառավարման գործոնին, որը ներառում է առաջին հերթին դպրոցի տնօրենի աշխատանքային գործունեությունն իր ողջ էությանը ու բովանդակությամբ: Պետք է գիտակցել, ընթացումով մոտենալ և համոզված լինել, որ դպրոցի հաջողությունները մեծապես պայմանավորված են դպրոցի ղեկավարների, պետական կրթական քաղաքականության և ներքին աշխատանքային քաղաքականության շարունակականությամբ: Եթե փորձեն նշածս պարզաբանել, ապա կստացվի, որ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներ իրականացնելու, կրթական, գործընթացի ռազմավարությունն ընկալելու և այն մատող սերնդի կրթությանն ու դաստիարակությանը ծառայեցնելու, ինչպես նաև դպրոցի աշխատանքները արդի մարտահրավերներին դիմագրավելու գործում կարևոր են դպրոցում գործող բոլոր օղակների ճիշտ կառավարումն ու ղեկավարումը, այդ ուժերի կոորդինացումը մեկ ընդհանուր նպատակի: Սա պետք է լինի դպրոցի տնօրենի ամենօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասը, ավելի ճիշտ՝ տնօրենը իր աշխատանքների պլանավորման հիմքում պետք է ունենա հենց այս դրույթները՝ գումարած դպրոցի մանկավարժական կոլեկտիվի աշխատանքի ռազմավարական կոլեկտիվում ու նպատակաուղղված գործունեությունը:

Որպես կանոն, դպրոցներն առաջնորդվում են նախօրոք կազմված և մանկավարժական խորհրդի նիստում հաստատված աշխատանքային պլանով: Պարզապես հարց է, թե արդյո՞ք դպրոցի աշխատանքային պլանը կազմելիս գործող բոլոր օղակներն են մասնակցում և ամուսն առաջարկություններ այն ավելի բովանդակալից, և որ կարևոր է՝ իրականացնելիս դառնալու համար, ինչը շատ անհրաժեշտ է: Ուսման որակի ցածր մակարդակը հուշում է, որ նույնիսկ շատ հնարավոր է, որ որոշ դպրոցներում ամեն տարի այն նույնությամբ արտագրվում է ու ներկայացվում հաստատման:

Նույն այդ որակը հուշում է նաև, որ հազիվ թե որևէ դպրոցում տնօրենի կամ փոխտնօրենի անմիջական հորդորով կամ պահանջով մանկավարժական խորհուրդը ձեռնամուխ լինի այս կամ այն առարկայի դրվածքի արմատական ուսումնասիրմանը՝ վեր հանելով եղած թերությունները, մատնանշելով ուղիներ այդ բացերը վերացնելու համար: Իսկ հաջողությունների գրանցման դեպքում կառավարման փորձի փոխանակման, տարածման, ընդհանրացման գործընթացի անհրաժեշտություն:

Դպրոցի տնօրենի առօրեական աշխատանքի մաս պիտի դառնա աշխատանքային պլանով ընդունված բոլոր դրույթների իրականացման վերահսկումը՝ այդ գործին մասնակից դարձնելով մանկավարժական խորհրդին, ուսումնական գծով տեղակալին, կազմակերպչին, դասղեկներին, կաթնմետների վարիչներին, մեթոդխորհուրդների նախագահներին, գրադարանավարին և մյուս պատասխանատու անձանց: Կասկած չկա, որ այն դպրոցներն են արձանագրում հաջողություններ կրթության և դաստիարակության ասպարեզում, որոնց տնօրենները գտնվում են իրենց պարտականությունների կատարման և իրավունքների տնօրենման պատշաճ մակարդակի վրա, ովքեր գիտակցում են դպրոցի ու կրթության կարևորությունը, երկրի

համար մտահոգ քաղաքացիներ կրթելու և դաստիարակելու անհրաժեշտությունը:

Կրթական համակարգը դիմամիկ գարգացող համակարգ է: Իր գործունեությունը կազմակերպելիս այն ոչ միայն պետք է հաշվի նստի կրթական հանրության, հասարակության կարծիքի հետ, այլ նաև մշակի դպրոցի անխոչընդոտ, համընթաց զարգացման, կառավարման, սպասարկման համագործակցության ճկուն ձևեր: Ստացվում է, որ, իրոք, կրթական համակարգի անընդհատ բարեփոխումը կենսական անհրաժեշտություն է, և այն պետք է լինի շարունակական՝ հենվելով ազգային առանձնահատկությունների, ազգային՝ հայեցի մտածողության, ազգային գաղափարախոսության վրա, լինի արդի մարտահրավերներին դիմակայող, ազգային ավանդույթներն ու արժեքները պահպանող ու առաջ մղող:

Տնօրենը պետք է, նաև պարտավոր է վերահսկել ուսուցչի աշխատանքը դպրոցում. ինչպիսի մեթոդական, մասնագիտական, մանկավարժական որակներ է ձեռք բերում, ինչպես է յուրացնում դասավանդման ճորձազմավարության ընդհանուր սկզբունքներն ու տրամաբանությունը, ինչ ուղիներ է մշակում պրակտիկ գործունեությունն առավել արդյունավետ դարձնելու համար: Գիտակցում է, արդյոք, որ դժվարությունները ծագած խնդիրները լուծելու, հաղթահարելու համար են, ոչ թե տրտնջալու, դժգոհելու, շրջանցելու: Միանգամայն նուրբ ու զգուշավոր աշխատանք է պահանջվում երիտասարդ ուսուցիչների հետ աշխատելիս:

Ոգևորված աշխատանք. սիս թե ինչ է զգում երիտասարդը, երբ առաջին օրը մտնում է դասարան, առավել ևս, երբ դա է իր երազանքի աշխատանքը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ այդ ոգևորվածությունը ժամանակի ընթացքում սկսում է նվազել, կարող է նաև դադարել: Եվ որպեսզի դա տեղի չունենա, երիտասարդին պետք է շրջապատել հոգածությամբ ու նրա գիտակցությանը հասցնել մի շատ պարզ բան՝ սեր երեխայի նկատմամբ: Եթե կա այդ սերը, առավել ևս, եթե այն փոխադարձ է, ապա նրա հետ աշխատելիս մեթոդները կծեղվեն համատեղ աշխատանքի պրոցեսում: Իսկ եթե սերը երեխաների հանդեպ պաղ է, ապա շատ ավելի ծանձրալի կլինի: Քիչ չեն բազմագիտակ մանկավարժները, որոնք շարունակ բողոքում են երեխաներից. պարզապես նրանց մոտ երեխաների հանդեպ սեր չկա, անտարբերությունն իր գործն արել է ժամանակին: Դա տեղի է ունենում այն դեպքում, երբ տնօրենն ու փոխտնօրենը ժամանակին ուշադրությունից դուրս են թողել երիտասարդ մասնագետին, որը նույնպես անտարբերության կործանարար արդյունք է:

Ուսուցչի աշխատանքի վերահսկումը ներդրողական աշխատանքների վերահսկման կարևոր ու պատասխանատու օղակներից է: Այս օղակի նպատակալից գործառույթը դասալսումներն են: Դրանք, բնականաբար, չպիտի կրեն պատահական, ձևական բնույթ զուտ նախատեսված պլանը կատարելու համար: Նախ պետք է ունենալ դասալսումների պլան-ժամանակացույց: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իմանա, թե իր մոտ որ առարկայից երբ են լինելու հնարավոր դասալսումներ: Դասալսողները՝ տնօրեն, փոխտնօրեն, նույնպես պետք է նախապատրաստվեն դասալսմանը. ծանոթանան նախորդ թեմային, ծրագրային պահանջներին, նրա առանձնահատկություններին, յուրացման համար տված հանձնարարություններին, դասապրոցեսին օգտագործվելիք դիպակտիկ նյութերին: Առանց այդպիսի դիտարկումների դասալսումը կկրի ձևական բնույթ, իսկ վերլուծությունը՝ ոչ նպատակային և ոչ էլ արդյունավետ: Կարևոր է, որ դասի վերլուծությունը

կատարվի բարոյահոգեբանամանկավարժական լավ մթնոլորտում: Վերլուծության ժամանակ պետք է ուշադրության կենտրոնում պահել թեմայի ուսուցողական, դաստիարակչական նպատակները, դասավանդման մեթոդները, աշակերտների ակտիվության մակարդակը, դասի կառուցվածքը, կահավորումը, դասի պլանի պահանջների կատարումը, իսկ դասի ընդհանրացված գնահատականը պետք է բավարարի գնահատման չափորոշիչներին ու պահանջներին: Կարևոր է շեշտել ուսուցչի խոսքի կոլտուրայի, մանկավարժական տակտի, աշակերտների հետաքրքրությունների դրսևորման հանգամանքը: Ուսուցչին տրված առաջարկությունները պետք է որ համապատասխանեն նրա մասնագիտական հմտություններին, դրանք կատարելու ընդունակություններին, ինչպես նաև դասին տված գնահատականին:

Ասել է թե՛ ներդրողական վերահսկողության զլխավոր նպատակը պետք է լինի ամեն կերպ նպաստելը ուսուցչի աշխատանքի ճիշտ կազմակերպմանն ու ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Դպրոցի տնօրենը, անկասկած, պետք է լինի ոչ միայն բազմակողմանի զարգացած, այլ նաև բազմակողմանի առաջնորդ, որին կարելի է վերագրել սկզբունքայնություն, ձեռներեցություն, ինքնավստահություն, ինքնատիրապետում, կազմակերպչական ունակություններ դրսևորելու կարողություն, մասնագիտական կարողությունների բարձրացման շարունակական ձգտում: Նա իր էությանը պետք է իրոք լինի ոգևորող կազմակերպիչ, ինչով կարելի է խանդավառել կոլեկտիվը շատ անդամներին: Նման վարքի դրսևորումը երիցս կնպաստի մարդկային ռեսուրսների հնարավորությունները կենտրոնացնելու, նրանց ներուժը նպատակաուղղված գործունեություն ծավալելու գործին: Դպրոցի ղեկավարի կողմից իրադրության շրջափոխություն գնահատումը և այն որպես հետազոտական աշխատանքի օբյեկտ ընկալումն ու նրա լուծման համար մանկավարժական կոլեկտիվի ջանքերի ռազմավարությունը, անկասկած, կդառնան հաջողությունների լուրջ գրավական:

Դպրոցի օպերատիվ կառավարման հիմքում պետք է լինի նաև հաստատության զարգացման այնպիսի ռազմավարություն, որը ներդաշնակում է ինչպես ղեկավարի, այնպես էլ մանկավարժական կադրերի որակական ու ստեղծագործական ներուժին, նորամուծություններին հետևելու կարողությանը, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու ձգտումին: Հաստատության զարգացման նմանատիպ ուղիներ կարող են դառնալ մանկավարժական ճորձագիտության, դասավանդման ճորձագիտության, դաստիարակչության ու մշակումը, նպատակների հստակացումն ու իրականացման ուղիների փնտրումն ու կյանքի կոչելը:

Անհրաժեշտություն է դարձել ուսումնական հաստատությունների կառավարման ակալեմենտրոնացված մոդելի առաջնությունը:

Մանկավարժական լայն ինքնավարության համակարգը հաստատություններին կդարձնի կառավարման առումով ավելի ճկուն, ազատ զարգացման համար կստեղծվեն առավել նպաստավոր պայմաններ: Այսօր մեր դպրոցները լրիվությամբ զրկված են ինքնավարությունից: Նույնիսկ դպրոցի նախկին ուսուցչին հետ կանչելու համար (թեկուզ թոշակառու) տնօրենը պարտավոր է նամակ հղել շրջանային բաժին, բաժինը՝ նախարարություն, և պատասխանը այդ նույն ճանապարհով հետ է գալիս, որը տևում է մեկ ամիս, գուցե ավելի ժամանակ: Արդյունքում տուժում է աշակերտը:

Հենց այդ պատճառով չի ձևավորվում

ինքնազարգացող կրթական համակարգ, չեն կայանում համակարգի զարգացմանը սատարող գաղափարների հարուստ պաշարով կրթական հանրությունն ու նրանում ցանկալի բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:

Խորհրդային տարիներից մի կարծրատիպություն վստահորեն մուտք էր գործել մեր նորանկախ հանրապետության դպրոցական համակարգ և շարունակում է հաստատուն մնալ: Դա դպրոցի տնօրենի համարյա անձեռնմխելիության կարծրատիպությունն է: Եթե փորձենք մի քիչ պարզեցնել, ապա կստացվի, որ տնօրենին աշխատանքից ազատելու ոչ մի ելք չկա՝ կապված ուսման որակի հետ: Չավելջտալի է հնչում: Բայց իրականությունն այն է, որ գրեթե բոլոր տնօրենները մինչև թոշակի անցնելը ղեկավարում են դպրոցը: Այստեղ, անկասկած, ամենահուսալի «հզոր գեները» աշխատանքային փորձի կուտակումն է: Եկեք մի պահ կտրվենք ամեն ինչից ու հետևենք պատմության ընթացքին: Անտեսնեք, որ գրեթե բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներն սկսել են պաշտոնեական դիրքը չարաշահել, կոռուպցիոն-սկանդալային վիճակի մեջ հայտնվել միայն որոշակի աշխատանքային փորձ կուտակելուց հետո (թող ինձ ներեն բոլոր նրանք, ովքեր բարեխղճորեն են կատարում իրենց վստահված գործը): Իհարկե, աշխատանքային փորձը շատ ավելի լավ է, սակայն դրան զուգահեռ օրենքները շրջանցելու և աշխատանքին մատնեի արանքով մայելու փորձ էլ է կուտակվում:

Եթե չեն սխալվում, 1995 թվականից առայսօր տնօրենները ոչ որակավորման դասընթացներ են անցել և ոչ էլ գոնե մի անգամ ատեստավորվել: Տարիներ առաջ տնօրենների ատեստացիա անցկացնելու համար թերթը տպագրեց շուրջ 600 հարցով հարցաշար: Այն միայն զարմանք առաջացրեց: Որոշ ժամանակ անց 600-ը դարձրին 400, և թերթը վերստին տպագրեց հարցաշարը: Սակայն դա էլ մնաց թղթի վրա: «Ի՞նչ ենք կորցրել, ինչի՞ ենք ման գալիս», - կարող է մտածել ընթերցողը: Հավատացնում են, կրթության որակի անկումը անկում է երկրի տնտեսական, քաղաքական, հասարակական կյանքում: Տնօրենին, ինչու չէ, նաև ուսուցչին որքան որ փառք ու պատիվ է բերում նրա բեղմնավոր մանկավարժական գործունեությունը, այնքան էլ՝ հասարակական աշխատանքը: Հասարակական աշխատանք, հասարակության հետ համագործակցություն. այս և նման հարաբերությունները շատ ավելի հարգի էին և կազմում էին մտավորականի աշխատանքային գործունեության բաղկացուցիչ մաս, որը, սակայն, դուրս է մղվում մեր էությունից: Գյուղերում ապրող մտավորականները, առավել ևս ուսուցիչներն այս ուղղությամբ տակավին շատ անելիքներ ունեն: Միանգամայն իրավացի է մեծ մանկավարժ Կ.Դ. Ուլինսկին. «Ուսուցչի՝ արտաքինից համեստ թվացող գործը պատմության մեծագույն գործերից է. նա պայքարում է տգիտության և մարդկային արատների դեմ»: Իսկ եթե կա մեկը, որ կասկածում է նման երևույթների առկայության մասին, չարաչար սխալվում է:

Դպրոցը կառավարչական գործունեության իր ծրագրում պետք է որ ներառի նաև քաղաքացիական հասարակության ստեղծման նպատակային դրույթներ՝ դրա համար ստեղծելով միջավայր խելամիտ հասարակական ակտիվության համար, որտեղ մարդ կարող է պատասխանատու լինել հասարակության համար և հասարակության մեջ՝ իր համար:

Լեոն ԱՍԱԷԼԵՅԱՆ
գ. Եմիշճան

ՍՏԵՂԵԱՐԱՐ ԿԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՔՈՒԾԻՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՊՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏԱՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Եթե աստիճանները սխալ են դասավորված, անկախ նրանից, թե քանի աստիճան ես բարձրանում, միևնույն է՝ սխալ տեղ կհասնեմ...

Ի՞նչ է քուլչինգը: Քուլչինգը ժամանակակից հոգեբանության մեջ նոր ուղղություն է: Այն ի հայտ է եկել 20-րդ դարի 80-ական թվականներին, երբ հիմնադիրներ Թիմոթի Գոուլդին և Ջոն Ուիթմորը որոշեցին չեմպիոնների հետ ամհատական մարզումների դրական փորձը կիրառել նաև հոգեբանության մեջ: Քուլչինգն այսօր հաջողությամբ ներառում է մենեջմենթի, սպորտի, հոգեբանության և փիլիսոփայության ձեռքբերումները: Մենք կփորձենք ներառել նաև մանկավարժության ձեռքբերումները:

Ո՞րն է քուլչինգի առանձնահատկությունը: Քուլչինգը (քուլչինգ իրականացնող մասնագետը) չի տալիս կոնկրետ համեմարարականներ և ցուցումներ: Նա ակտիվացնում է մարդու մեջ հաջողության ձգտումը՝ հենվելով այցելուի անհատական դրական փորձի վրա: Քուլչինգի հիմնական կարգախոսն է՝ «Մեզմիջ յուրաքանչյուրն ունի բավարար պոտենցիալ հաջողության հասնելու համար»:

Քուլչինգ-մասնագետի խնդիրն է՝ աջակցել այցելուին արդյունավետ վարք ձևավորել իր գործունեության այս կամ այն ոլորտի մեջ (բիզնես, կարիերայի կառուցում, անձնական կյանք, մեր պարագայում՝ պատմելու կարողություն):

Անձի զարգացման անհատական գործընթացին աջակցելը համարվում է քուլչինգի այցեբարտը:

ԿԱՐԵՎՈՐ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Քուլչինգում կիրառվում է «Մերքին խաղ» երևույթը, որը հենվում է կյանքի նկատմամբ մարդու ստեղծագործական և դրական վերաբերմունքի վրա: Խաղը, որպես գործունեության ձև, օգնում է կիրառել ունեցած գիտելիքներն ու կարողությունները՝ առանց ավելորդ լարվածության, հաճույք ստանալով ինքնաբացահայտման և ինքնակատարելագործման գործընթացից: Քուլչինգը հնարավորություն է տալիս զգալ կյանքի համը, սիրել և հետաքրքրվել այն ամենով, ինչով զբաղվում է անձը:

Քուլչինգում քուլչի և այցելուի (աշակերտի) հարաբերություններն ի սկզբանե կառուցվում են գործընկերային հարթության վրա: Նրանց հաճախ անվանում են խաղընկերներ: Քուլչինգը կիրառում է «ուժեղ» հարցերի մեթոդը՝ այցելուի (աշակերտի) նպատակների, մոտիվների և արժեքների պարզաբանման համար: «Ի՞նչ է Ձեզ համար նշանակում երջանկություն, ուրախություն», «Ինչպե՞ս եք Ձեզ տեսնում (լսում) զգում՝ որպես երջանիկ, ուրախ մարդ», «Ի՞նչն է Ձեզ ամենից շատ երջանկացնում, ուրախացնում», «Ինչքա՞ն հաճախ եք Դուք ժամանակ հատկացնում Ձեզ երջանկացնող, ուրախացնող երևույթներին»: Նմանատիպ բաց հարցերը թույլ են տալիս ակտիվացնել այցելուի (աշակերտի) կողմից իրավիճակի գիտակցված և ստեղծագործական ընկալումը: Քուլչինգը օգնում է նաև առավելագույնս կոնկրետացնել, հստակեցնել գծագրած ծրագրի քայլերը: Պլանավորումից հետո գալիս է ամենապատասխանատու փուլը՝ մշակված ծրագրի գործնական իրականացումը: Քուլչինգը ոգևորում է այցելուին (աշակերտին), օգնում է հավատալ իր ուժերին՝ հենվելով վերջինիս դրական փորձի վրա: Քուլչինգում չկան ամհաջողություններ կամ խնդիրներ, կան միայն դասեր և մարտահրավերներ: Ամեն իրավիճակ սովորեցնում է ինչ-որ բան, իսկ քուլչինգը օգնում է հստակեցնել՝ կոնկրետ ինչ որակներ, կարողություններ, գիտելիքներ պետք է զարգացնել՝ առաջընթաց ունենալու համար: Այդպես է ձևավորվում հաջողության մարդու հոգեբանությունը:

Ո՞ւմ է հարկավոր քուլչինգը: Յուրաքանչյուրին, ով ունի հարուստ կենսափորձ, կրեատիվ մտածողություն, ով ցանկանում է ունենալ անձնային աճ և զարգացնել լիդերային որակներ: Մենք գտնում ենք, որ յուրաքանչյուր աշակերտ պատրաստ է ընդունելու քուլչինգի դրույթները:

Քուլչինգի սկզբունքները: Քուլչինգի և հաճախորդի (աշակերտի) համագործակցությունը կարող է տեղի ունենալ միմիայն այն դեպքում, երբ անհատը պատրաստակամ է պատասխանատվություն ստանձնել սեփական կյանքը (ուսումնառությունը) բարեփոխելու, շարունակաբար զարգանալու և ինքնակատարելագործվելու համար: Հենց սա է քուլչինգի հաջողության կարևորագույն գրավականը:

Քուլչինգի ընթացքում անհատը քուլչի աջակցությամբ սահմանում է նպատակներ և հետևողական գործողությունների շնորհիվ քայլ առ քայլ հասնում է այդ նպատակներին:

Լինելով միանգամայն պատասխանատու սեփական որոշումների և իրականացրած գործողությունների համար՝ անհատը (աշակերտը) լիովին պատասխանատվություն է կրում նաև սեփական ձեռքբերումների համար:

Չկա ավելի գեղեցիկ զգացողություն, քան սեփական գիտելիքներիդ համար պատասխանատվություն ստանձնելու շնորհիվ հաջողության հասնելու բերկրանքը:

- Քուլչինգն այն մարդն է,
 1. ով օգնում է իր հաճախորդին (աշակերտին) հաջողության հասնել և չչեղվել ճիշտ ճանապարհից, մինչև նպատակն իրագործված չլինի,
 2. ով աշխատում է իր հաճախորդի (աշակերտի) նպատակների վրա, փոփոխում և անգամ հեռացնում նրանք, որոնք արդեն հին են ու և ոչ արդիական, և օգնում է ընտրել ավելի նոր ու կարևոր նպատակներ,
 3. ով օգնում է հաճախորդին (աշակերտին)՝ կատարելագործել գիտելիքներն ու հմտությունները, մարդկանց հետ ճիշտ հարաբերություններ հիմնել, հաղթահարել հոգեբանական խնդիրները, բարելավել կյանքի որակը,
 4. ով օգնում է ընտրել ճիշտ կենսական և մասնագիտական ճանապարհ, որով, հնարավոր է, կարճ ժամանակում հաջողության հասնի:

Եվ որ ամենակարևորն է՝ քուլչինգը դա չի անում՝ հաճախորդի (աշակերտի) վզին փաթաթելով իր միակ ու ճիշտ տեսակետը, նա անում է դա հաճախորդի (աշակերտի) մերքին պոտենցիալը բացահայտելու միջոցով:

Մենք կփորձենք քուլչինգի որոշ դրույթների կիրառմամբ ձևավորել և զարգացնել աշակերտների հետաքրքրությունը նախ՝ գրքի հանդեպ, հետո՝ կրտսեր դպրոցականների պատմելու կարողությունների:

Պատմելու ուսուցումը բավականին բարդ գործընթաց է և մայրենի լեզվի դասի կարևոր փուլ, բայց աշակերտը պետք է սիրի և հետաքրքրվի դրանով : Տարրական դասարաններում շատ քիչ դասեր են իրականացվում՝ առանց կարդացածը պատմելու: Տարբեր ձևերով պատմելը, ինչպես նաև դրանց նախապատրաստվելը, դասը դարձնում են բազմաբնույթ և նպաստում աշակերտների խոսքի զարգացմանը:

Մեթոդական գրականության մեջ ընդունված են պատմելու հետևյալ տեսակները.

- մանրամասն կամ բնագրին հարազատ պատմել (ընդարձակ)
- համառոտ պատմել
- ընտրովի պատմել
- դատողություններով կամ մեկնաբանելով պատմել,
- ձևափոխված պատմել
- ստեղծագործաբար (փոփոխելով դեպքերի ընթացքը) պատմել
- շարունակելով պատմել
- պատմել որպես մասնակից (I դեմքով)
- պատմել որպես ակնմատես (III դեմքով):

Ներկայացնում ենք մի դիտարկում, որի օգնությամբ մայրենի դասագործընթացում կրտսեր դպրոցականների պատմելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը կընթանան առանց խոչընդոտների:

Նախ պետք է կարևորել երեխաների՝ հասկանալով կարողությունների կարողությունների զարգացումն ու մայրենի դասագործընթացի կառուցվածքը:

Տարրական դասարաններում հասկանալով կարողալու կարողությունների ձևավորման ու զարգացման համար կազմակերպվող աշխատանքների համար մեծ արժևորում ունի ծրագրային բաղադրամասերի պահպանումը: Այն է՝

- ա/ կարողալու հմտություններ
- բ/ աշխատանք բնագրի շուրջ
- գ/ խոսք և հաղորդակցում
- դ/ գրական տարրական գիտելիքներ
- ե/ առարկայական իմտեգրում
- զ/ ինքնուրույն ընթերցանություն
- է/ լեզվական աշխատանք

Պատմելու կարողությունների զարգացմանը հիմնականում նպաստում է բնագրի վրա աշխատանքը: Բնագրի շուրջ անցկացվող գրույցի միջոցով (գրույցի հարցերը նախապես հարկավոր է մշակել) աշակերտները ոչ միայն ըմբռնում են ստեղծագործության մեջ նկարագրված դեպքերի տրամաբանությունն ու հաջորդականությունը, այլև հասկանում են կարդացածը, իմաստավորում, կատարում են պարզ դիտարկումներ, մեկնաբանություններ, համեմատություններ, ընդհանրացումներ:

Պատմելու կարողությունների զարգացման հիմնական գործոնը մեր կարծիքով բնագրի շուրջ աշխատանքի կազմակերպումն է նպատակային հարցադրումների միջոցով:

Մենք կարևորում ենք հարցադրումների հետևյալ տեսակները.

- 1. վերարտադրողական պատասխան պահանջող հարցադրումներ,
- 2. վերլուծական պատասխան պահանջող հարցադրումներ,
- 3. քննադատական պատասխան պահանջող հարցադրումներ,
- 4. ստեղծագործական պատասխան պահանջող հար-

ցադրումներ:

Այդ նպատակով իրականացված հատուկ ստուգումներն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսուցիչների մեծ մասը դասագործընթացում կիրառում է նման հարցադրումներ, սակայն այդ հարցադրումների հերթականության խախտումով պայմանավորված՝ դասը նպատակին չի ծառայում, և կրտսեր դպրոցականների պատմելու կարողությունները չեն զարգանում: Բնագրի շուրջ կատարվող աշխատանքի ժամանակ կարևոր է վերարտադրողական, վերլուծական, քննադատական, ստեղծագործական պատասխան պահանջող հարցադրումների հերթականության պահպանումը: Բնականաբար, նոր նյութի ուսուցումը կընթանա հիմնականում վերարտադրողական և վերլուծական պատասխան պահանջող հարցադրումների միջոցով, իսկ հին նյութի հարցումը՝ քննադատական, ստեղծագործական պատասխան պահանջող հարցադրումների միջոցով: Չեն բացառվում նաև համալիր հարցադրումները:

Քուլչինգի դրույթների կիրառմամբ՝ այդ հարցադրումները կարող են ստանալ հետևյալ բովանդակությամբ հարցադրումներ.

- ա/ բաց հարցեր,
- բ/ գծագրած ծրագրի քայլերը կոնկրետացնող, հստակեցնող հարցեր,
- գ/ մշակված ծրագիրը գործնականում իրականացնող հարցեր:

Այս հարցադրումները մենք կփորձենք դիտարկել մեր տարածաշրջանում գործող միակ՝ 3-րդ դասարանի մայրենիի (հեղինակ՝ Կարինե Թորոսյան և ուրիշներ. Երևան, «Ման-մար», 2019թ.) դասանյութերի համատեքստում:

Հին դաս՝ Մխիթար Հերացին և տակառագործը, 2-րդ մաս, Նոր դաս՝ Երկնքի բոլոր աստղերը ճանաչում են նրան (Վիկտոր Համբարձումյանի մասին):

Բնագրի շուրջ աշխատելիս, նրա հերոսների գործողությունների շուրջ հարցադրույցը կազմակերպելիս կամ տեքստի զլխավոր միտքը, ենթատեքստը որոշելիս պիտի նկատի ունենալ, որ յուրաքանչյուր երեխա մի անհատականություն է, ունի իրեն և միայն իրեն հատուկ առանձնահատկություններ, այսինքն՝ ամեն մի երեխա եզակի է: Մեծ արժեք է երեխայի գործունեության կազմակերպման ամենակարևոր հմտությունը՝ պահպանել այդ եզակիությունը, պայմաններ ստեղծել, որ երեխան իրեն դրսևորի իր նման, գնահատել նրա արժեքային համակարգը, զարգացնել հակումներն ու ընդունակությունները, ընդլայնել յուրաքանչյուր երեխայի «ես»-ի հնարավորությունները:

Բաց հարցեր

- Խելացի մարդիկ միշտ հարցասեր են, հետաքրքրասեր են: Օտարականը նույնպես հետաքրքրասեր էր:
- Ի՞նչ է հարցնելը ինքներս մեզ, հարցնելը ուրիշներին: Ինչո՞ւ:
- Որպեսզի կարողանանք լուծումներ գտնել:
- Դա հնարավորություն կտա նոր բան սովորելու: Կտեսնենք, որ զարգանում ենք:

Հետևություն

Հետաքրքրասիրությունը հենց այնպես չի տրված մարդուն: Երբեք մի՛ դադարեք հարցեր տալ: Խելացի մարդիկ միշտ հարցեր են տալիս: Հարցերեք ինքներդ ձեզ, հարցերեք ուրիշներին, որպեսզի կարողանաք լուծումներ գտնել: Դա ձեզ հնարավորություն կտա նոր բան սովորել և տեսնել սեփական աճը:

- Օտարականը համոզվե՞ց, որ ինքը երջանիկ կլինի, եթե զբաղվի իր տակառագործությամբ:
- Իսկ Հերացին երջանիկ էր իր բժշկագիտությամբ:

Նա հայկական դասական բժշկության հիմնադիրն էր:

- Ինչո՞ւ էին երջանիկ:
- Սիրում էին իրենց աշխատանքը, արհեստը:
- Բայց հե՞շտ էր նրանց աշխատանքը:
- Աշխատանքում խնդիրները շատ են, չէ՞
- Իսկ երբ հաղթահարում ես այդ դժվարությունները, արդեն երջանկություն է....
- Ի՞նչ է ձեզ համար երջանկությունը:

Երջանկությունը խնդիրների բացակայությունը չէ, այլ դրանք հաղթահարելու կարողությունը:

- Կյանքում երջանկության հասնելու համար պետք է դժվարություններ հաղթահարել :
- Իսկ ինչի՞ Դուք կարող եք հասնել կյանքում, եթե նպատակ դնենք, եթե երազենք:
- Երազանքները, նպատակները դրական ու երջանիկ կյանքի շատ կարևոր բաղադրիչներ են:
- Թույլ կտա՞ք, որ ձեր երևակայությունը ազատ շրջի և ստեղծի այն աշխարհը, որտեղ դուք կցանկանալիք ապրել:
- Ո՞րն է այդ աշխարհը, որտեղ պետք է երջանիկ լինեք:

ՀՈՒՍԱՍՅԱՆ

ԿՅԱՆՔԸ՝ ԿԱՐՃ, ՓԱՌՔԸ՝ ԵՐԿԱՐ

44-օրյա պատերազմում անմահացած Մխիթար Ասրյանը դեկտեմբերին 1-ին կդառնար 38 տարեկան: Ստեփանակերտի Շ.Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում այդ օրը նրա հիշատակի մեծարման ու խոնարհման երեկո էր կազմակերպվել: Դերոսի՝ տեսագրություններով կենսապատումը ներկայացնում էր սիրող որդու, հոր, ամուսնու, ընկերոջ, անձնուրաց հայրենասերի կերպարը:



Վլադիկ և Արմիդա Ասրյանների ընտանիքում 1983թ. ծնված ավագ որդի Մխիթարն իր նպատակասլացությամբ կոչված էր լինելու երեք քույրերի և եղբոր համար օրինակ, բոլորի հպարտությունը: Նպատակ էր դրել ոստիկան դառնալ և օրինապահ ու օրինապաշտպան ծառայություն մատուցել իր ժողովրդին: Հենց այդ նպատակով էլ ընդունվում է ԱրՊՀ ճանապարհային երթևեկության կազմակերպում, կառավարում և ճարտարապետության ֆակուլտետը: Մեկ տարի սովորելուց հետո գորակոչվում է բանակ: Ծառայությունն անցնում է Թալիշի զորամասում: Բարեխիղճ ծառայության համար մի քանի ամիս անց ստանում է սերժանտի կոչում:

սակրավոր: 2020թ. սեպտեմբերին սկսված պատերազմի առաջին իսկ օրվանից ռազմի դաշտում էր: Թալիշից մինչև Շուշի մասնակցել է մարտական գործողություններին՝ հոգում ունենալով այն հանդուժող, որ ամեն ինչ լավ է լինելու: Ամենաբարդ ու վտանգավոր առաջադրանքներն էին հանձնարարում նրանց ջոկատին, որը մի քանի անգամ ընկել է թշնամու ծուղակի մեջ: Բազում իր ընկերների հերոսացման վկան եղավ: Ծանր է տարել ընկերների կորուստը՝

նրանց վրեժը սրտում շարունակել է մարտնչել մինչև իր կյանքի վերջին օրը: Իսկ վերջին մարտը Շուշիի համար էր: Նոյեմբերի 6-ին անբաժան ընկերների՝ Գագիկ Ալավերդյանի ու Վազգեն Աբրահամյանի հետ երեք մեքենաներով շտապում էին վիրավորներին դուրս բերել: Կրկին հայտնվում են շրջափակման մեջ, այս անգամ՝ ճակատագրական:

Մխիթարի և ընկերների մասին որոշ մանրամասներ ներկայացրեց ծառայակից ընկեր Ար-

մեց, որ դպրոցում սովորելու տարիներից Մխիթարը յուրահատուկ հետաքրքրություն էր ցուցաբերում հայոց պատմության նկատմամբ, յուրացնում էր նրա բոլոր հերոսական դրվագները, և ինքն էլ դարձավ այդ պատմության մի ոսկե էջը:

Մխիթարին ավիչ ներարկողը, ուժ տվողը նրա համերաշխ ընտանիքն էր՝ կինը, երկու զավակները, հարազատները: Նրա ապրած օրերը՝ «Մի կյանք՝ Մխիթար անունով» հուշամատյանի է վերածել զարմուհի, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի ուսանողուհի Լուիզա Գևորգյանը: Համալսարանի ղեկավար Դոնարա Գաբրիելյանը, որը կորցրել է ամուս-



նուն Արցախյան պատերազմի ժամանակ, խորհուրդ տվեց Մխիթարի կնոջը՝ Աննային, չկոտրվել, արժանապատվորեն դիմակայել. սիրելի մարդիկ երկնքից էլ ամեն պահ իրենց ուժը փոխանցում են հարազատներին, զլուխ խոնարհեց հերոսածին մոր առաջ, շնորհակալություն հայտնեց երիտասարդներին, որ սերտում են հերոսների կյանքը:

Ջորագրվելուց հետո շարունակել է ուսումը և 2010թ. աշխատանքի անցել ԱՀ ռազմական ոստիկանությունում: Ութ տարի արժանապատվորեն ծառայելուց հետո տեղափոխվել է «The HALO Trust» սակրավորական կազմակերպություն՝ կյանքի համար վտանգավոր, մարդասիրական բարդ աշխատանքը լավագույնս իրականացնելով: 2020թ. ծառայության է անցել ԱՀ ՊԲ հատուկ նշանակության ստորաբաժանում՝ որպես հետախույզ-



թուր Հայրապետյանը. «Կողք կողքի, ուս ուսի կռվել են և ուս ուսի էլ համարել անմահների երկնային հզոր բանակը»՝ հավելելով, որ ապրողներիս մնում է ամեն օր յուրաքանչյուրս մեր գործով ծառայել այն գաղափարներին, որոնց համար հայ ազգն այսքան հերոսներ ծնեց, և հզորացնել մեր հայրենիքը:

Իսկ Մխիթարի հայրը՝ Վլադիկ Ասրյանը, ասաց, որ հպարտ է, որ ունի իր կողքին կանգնած մեր ժողովրդին, որը իրեն է համարում իր որդուն, հետևաբար հերոսը միայն իր զավակը ու նրա նմանները չեն, այլ և Արցախում ապրող ամեն ոք, անգամ մոր ծնված մանուկը, որոնք իրենց քայլերով ամրապնդում են մեր հողը:

Կարճ, բայց իմաստալից ու բազմաբովանդակ կյանք է անցել Մխիթար Ասրյանը: Ստեփանակերտի հ. 12 դպրոցի նրա ուսուցչուհի Կարինե Դադայանը պատ-

Մխիթարի 12-ամյա դուստրը՝ Մոնիկան, որի բարձունքների հասնելուն հավատում էր հայրը, հոր ծննդյան օրը շնորհավորեց իր ստեղծած պարով՝ ապացուցելով, որ իր բնավորությամբ, հմտությամբ ու նպատակասլացությամբ չի զիջում նրան:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2-րդ փուլ Գծագրած ծրագրի քայլերը կոնկրետացնող, հստակեցնող հարցադրումներ

Այս փուլում, քանի որ ուսուցիչը սովորողին պետք է ուղղորդի դեպի բնագրի համապատասխան պատասխանները, հարցադրումը տալիս է հնարավորինս դրան աջակցելու նպատակով: Օրինակ՝ - Հնարավոր է, որ Վիկտոր Համբարձումյանի երջանիկ աշխարհն էլ աստղերի հետ լինի: - Ահա Վիկտոր Համբարձումյանի երջանիկ աշխարհն էլ աստղերի հետ էր: - Նա էլ է՞ր սիրում մոր աստղեր բացահայտել: - Նա աշխարհին հիացրե՞ց, զարմացրե՞ց, ապացուցե՞ց, որ հայ մարդը կարող է դառնալ աշխարհի ամենամեծ գիտնականներից մեկը: Նա մե՞ծ հայ էր: - Շատ գիտնականներ ուզո՞ւմ էին հանդիպել նրա հետ, որպեսզի շատ տեղեկություն իմանային աստղերի մասին: - Հնարավոր է, որ նա 11 տարեկանում գրի իր գիտական առաջին աշխատությունը: - Տիեզերքում էլ ե՞ն տեղի ունենում պայթյուններ, ծնվո՞ւմ են մոր աստղեր, աստղերը ապրո՞ւմ են առանձին խմբերով, ինչպես կղզիները՝ օվկիանոսում: - Դառնո՞ւմ է միջազգային աստղագիտական միության նախագահը: - Արագած լեռան լանջին կառուցո՞ւմ է Բյուրականի աստղադիտարանը: - Նա՞ էլ է հերոս: - Նա կարո՞ղ էր 5-6 տարեկանում ռուսերեն և հայերեն կարդալ և գրել: - Շա՞տ էր զբոսնում հոր հետ և հարցեր տալիս:

- Հայրը նրա հարցերին պատասխանում էր խաղի ձևով: - Հայրը՝ Համազասպը, եռանդո՞ւն մարդ էր, գրո՞ղ էր, թարգմանի՞չ էր: - Մայրը՝ Հռիփսիմեն, ուժե՞ղ բնավորություն ուներ, միաժամանակ քնքուշ է՞ր, գթասի՞րտ էր: - Գիմնազիայի տնօրենը 5 տարեկան Վիկտորին հարցրե՞ց, թե որն է ամենամեծ թիվը, ինչի վրա է հենված Երկրագունդը, քանի անգամ է այն մեծ Արևից: - Վիկտորը պատասխանե՞ց, որ ամենամեծ թիվ չկա, որ Երկրագունդը ոչ մի բանի վրա հենված չէ, և Արևն է երկրագնդից միլիոն անգամ մեծ: - Այսօր էլ է՞ հայ ժողովուրդը նշանավոր շատ մարդկանց ծնում... հերոսների: Մշակված ծրագիրը գործնականում իրականացնող հարցադրումներ Քանի որ կրտսեր դպրոցում պատմելու կարողություն ձևավորելու համար կարևոր է բնագրի հարցաշարի կազմումը, փորձում ենք աշակերտներին ուղղված մեր հարցադրումների միջոցով կազմել բնագրի հարցաշարը: 1. Հայ ժողովուրդը նշանավոր շա՞տ մարդկանց է ծնել: 2. Հռիփսիմեն ո՞վ է: 3. Համազասպը ո՞վ է: 4. Հայրն ու որդին ինչպե՞ս էին գրուցում իրար հետ: 5. Տնօրենի հարցուփորձին ինչպե՞ս պատասխանեց Վիկտորը: 6. Տիեզերքում պայթյունները ի՞նչ են առաջացնում: 7. Ո՞վ էր Միջազգային աստղագիտական միության նախագահը: 8. Բյուրականի աստղադիտարանը որտե՞ղ է կառուցված:

9. Ո՞վ է աշխարհի ամենամեծ գիտնականներից մեկը: Այս հարցադրումները կարող են հանդիսանալ համապատասխան հարցաշարի ենթակետերը: Կատարված աշխատանքի արդյունքում աշակերտները պետք է եզրահանգեն, որ բնագրի վերնագիրն արտահայտում է ստեղծագործության հիմնական բովանդակությունը, իսկ հարցաշարի կետերը՝ առանձին հատվածների բովանդակությունը: Յուրաքանչյուր հարցի պատասխանելով՝ աշակերտը կտիրապետի նաև բնագիրը համառոտ պատմելու հմտություններին: Իսկ եթե սովորողն ընկալել է նյութն ու բնագրի բառերը գծագրած ծրագրի քայլերը կոնկրետացնող, հստակեցնող հարցադրումներով և բաց հարցերով ունի վերլուծելու և համադրելու կարողունակություն, ուրեմն նա տանը կկարողանա հեշտությամբ կարդալ բնագիրը, վերլուծել յուրաքանչյուր հատված, պատմել այն նաև մանրամասն, համարելի հատվածները և պատմել բնագիրը նաև քննադատական մտածողությամբ: Ավելին, գեղարվեստական բնագրի շուրջ այսպիսի դիրքորոշմամբ աշխատելիս ուսուցիչը կնպաստի, որ երեխաներն ստեղծագործությունն ընթերցելիս հասնեն ըմբռնման այնպիսի մակարդակի, որը կօգնի նրանց ստեղծել մոր և ավելի ակտիվ կապեր ունեցած գիտելիքների և մոր ձեռք բերածի միջև: Միայն այդ դեպքում նրանք կդառնան մտածող ընթերցողներ, որովհետև իրենց սեփական կարծիքը, հայացքը, դիրքորոշումը, տեսակետը ձևավորելու համար իրենք կմտածեն, կիմաստավորեն և հենվելով նաև կարողացածից ձեռք բերածի վրա՝ կամբողջացնեն սեփական մտտեցումը, այսինքն՝ կձևավորեն իրենց «ճիշտը»:

Աննա ԳԵՏՐՈՍՅԱՆ ԱՀ ԿԳՄՍ նախարարություն, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, մ.գ.թ., դոցենթ

ՆԵՐՍԱՊԱՏՈՒՄ

ԵՐԿՈՒ ՃՐԱԳ՝ ՄԻ ՕՋԱՄԻՑ

Մահը անմահությունն է քաջերի...

Թե 44-օրյա պատերազմը ունի ինչքանով է բաժին հասել, խոսում են փաստերը, փաստեր, որ ամեն քայլափոխի կրակակոխ հետևում են մեզ ու խլում մեր հոգեկան անդորրը: Մեկը մեկից՝ տարբեր, մեկը մյուսից՝ ահավոր ու սարսափելի: Ժամանակն էլ ի գորու չի լինի սպեղանի դեղե այդ խոր ու անբուժելի վերքերին, որ կրում են իրենց հոգում հարազատներ ու մտերիմներ կորցրած հայ ընտանիքները: Այդ պատերազմը մարդկության պատմության մեջ կմնա որպես ամենաահավոր ու ամենասարսափելի իր բովանդակային առումով, ու դարեդար կանթովեն նրա կազմակերպիչներն ու հովանավորողները, խուլ ու համր ձևացող մարդկությունը:

Դժվար ու ծանր է ներկայացնել մանավանդ այն ընտանիքների վիճակը, որոնք կորցրել են ոչ թե մեկ, այլ երկու, երեք հարազատներ: Ոչ միսթարական խոսքը կօգնի նրանց, ոչ մյուսական ու բարոյական աջակցությունը, ոչ էլ ժամանակը:

Նրանք իրենց անդառնալի կորստի հետ են գիշեր ու ցերեկ, իրենց առօրյա գործերի մեջ, նույնիսկ թվացյալ ժպիտների ու ուրախությունների ընթացքում:

Վիլյամ և Արմիդա Բաբայանների ընտանիքն էլ այն տառապյալներից մեկն է, որ հայրենիքի զոհասեղանին դրեց իր ունեցած երկու որդիներին՝ իր երկու աչքի լույսին, որոնք բռնեցին հավերժության ճանապարհը:

Ավագ որդին՝ Հայկ Բաբայանը, ծնվել է 1975թ. մայիսի 6-ին Ստեփանակերտ քաղաքում՝ Կրկման թաղամասում: Սովորել է Ստեփանակերտի Հովհ. Թումանյանի անվան հ.9 միջնակարգ դպրոցում: Ավարտելով 8-րդ դասարանը՝ ընդունվել է Ստեփանակերտի հ. 21 ՄՊՏ ուսումնարանը, որն ավարտել է 1993թ. ավտոկռուցիկական մասնագիտությամբ: Որակավորման հանձնաժողովի 1993թ. հունիսի 25-ի որոշմամբ՝ Հայկ Բաբայանին շնորհվել է 5-րդ կարգի ավտոկռուցիկական որակավորում:

Արցախյան շարժման տարիներին նա եղել է ակտիվիստներից մեկը: Ահա թե ինչ է հիշում հայրը Հայկի մանկությունից. «Սիրում էր գեները, ես էլ նրա համար ինքնաշեն մի ատրճանակ էի պատրաստել: Հարևան թուրքի տղան տեսել էր նրա ձեռքին և Հայկին ասել. «Հայրիկիդ ասա մի հատ էլ ինձ համար սարքի»: Հայկը նրան պատասխանել էր. «Հայրս ինձ համար սարքել է, որ ձեզնից պաշտպանվեմք, դո՛ւ ինչ ես անում...»: Երբ ստեղծվեցին առաջին ջոկատները, վաշտերը, ես ու Հայկը կամավորագրվեցինք: Հայկը ընդամենը 14 տարեկան էր: Պաշտպանում էինք 26-ի դիրքերը: Վաշտում ավագը ես էի, կրտսերը՝ Հայկը: Մեզ ասում էին օտեռ և ԿԻՄ Մախարաշվիլի («Օտեռ ԿԻՄ» կինոֆիլմից): Երբ թուրքերը (օսմո) հարձակվեցին Կրկմանի վրա, ամվախ Հայկը մորն ու բորջը պատուհանով փախցրեց անտառ, այնտեղից էլ ապահով տեղ՝ հարևանի տուն: Նրա ձեռքին ընդամենը եղել էր այն ինքնաշեն ատրճանակը, որը ձորում մի անգամ փստացնելով՝ նա կանգնեցրել է թուրքերին: Վախ ասվածը Հայկի համար չէր: Երբ 26-ի վրա հարձակում եղավ, հրամանատարին ասացի. «Թող առաջ ես գնամ, հետո՝ ինքը (ուզում էի խնայել նրան)»: Հետո Հայկը տեղափոխվեց հատուկ ջոկատայինների վաշտը:

1992թ. փետրվարից մինչև նոյեմբեր ամիսը ծառայել է ինքնապաշտպանական կամավորական ջոկատի կազմում և մասնակցել Ղարաղջաղի ու Սեյդահմեդլիի ազատագրական մարտերին, պաշտպանել Ասկերանի շրջանի Քյաթոկ, Արանգամին, Դահրազ գյուղերի և 13-րդ դիրքերը: Վիրավորվել է Մարտակերտի շրջանի Ումուրթու գյուղի պաշտպանության ժամանակ՝ ստանալով բեկորային վնասվածք և կոնտուզիա:

1999թ. սեպտեմբերին նշանակվել է ԼՂՀ պաշտպանության նախարարի տեղակալի համարձակ շնորհվելով նրան ենթասայի զինվորական կոչում: 1993-2001թթ. ծառայել

է Կենտրոնական պաշտպանական վաշտում: 2002-2003թթ. աշխատել է «Ակադեմիա» ՄՊԸ-ում, 2008-2009թթ.՝ «Արդշինիվեստբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղում, 2010-2013թթ.՝ «Արցախագազ» ՓԲԸ-ում, 2013-2015թթ.՝ «Գոլդ սթար» ՓԲԸ-ում՝ որպես վարորդ: 2015-ից նորից ծառայության է անցել մինչև 2020թ. օգոստոս ամիսը:

Մասնակցել է նաև 2016-ի ապրիլյան պատերազմին՝ որպես կամավորական: Պատմում է կինը՝ Լիլիան. «Ապրիլյանի օրերին երեք ընկերներով մեկնեցին առաջնագիծ: Հայկոյի ներկայությունը ոգևորող էր թե՛ ժամկետայինների, թե՛ կամավորականների համար: Բոլորն իրենց ապահով էին զգում նրա



հետ: Բազմաթիվ ծանր իրավիճակներից է պատվով դուրս եկել՝ հաղթահարելով բոլոր դժվարությունները: Նա այնքան հմուտ էր բոլոր անելանելի վիճակներում, որ ես համոզված էի, որ Հայկին ոչինչ չի պատահի: Թվում էր՝ մահը նրա համար չէ...»:

2020թ. օգոստոսի 11-ին, ավարտելով երկարամյա ծառայությունը, անցնում է կենսաթոշակի: Թվում էր, թե խաղաղ պայմաններում կվայելի հետագա տարիները, սակայն պայթեց 44-օրյա պատերազմը: Կրտսեր եղբայրը՝ Հովհիկը, որը նույնպես ծառայում էր վերանորոգման գումարտակում (ռեմբատ), իր մոտ է իրավորում Հայկին (ուզում էր եղբորը մոտ լինել այդ ծանր օրերին): Հայկը իրեն վստահված ՌԻԱԶ մեքենայով առաջին օրերին անընդհատ վիրավորներ ու զոհեր էր տեղափոխում: Մահվանից մեկ օր առաջ փչանում է ավտոմեքենան: Հաջորդ օրը՝ հոկտեմբերի 2-ին, երբ աշխատում էր մեքենայի վրա, որ ժամ առաջ հասնի վիրավոր ընկերներին, թշնամին Պոլոնեզի գերծգրիտ հրթիռներով հրետակոծում է վերանորոգման գումարտակի տարածքը: Հայկը մեքենայի տակից դուրս է գալիս, որ տեսնի, թե որտեղ է վնաս հասցրել արկը: Հովհիկն էլ շենքից էր դուրս եկել, հո Հայկը չէ՞ր վնասվել: Եվ պայթում է հերթական հրթիռը... Թե եղբայրներից որը ունի համար էր դուրս եկել բակ, ոչ ոք վստահ չի կարող ասել, դա միայն Աստուծոն է հայտնի, միայն հետո պարզվեց, որ այդ օրվա յոթ զոհերի մեջ էին երկու եղբայրները՝ Հայկն ու Հովհիկը:

Այսպես, 2020-ի հոկտեմբերի 2-ին մարտն է Բաբայանների տան երկու ճրագը: Հայկ Բաբայանը, որ 2010 թվականից անդամակցում էր նաև Արցախի ազատամարտիկների միությանը, պարգևատրվել է «Արիության համար» (2006թ.), «Հուշի ազատագրման համար» (2007թ.), «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի (2019թ. հունվար), 2-րդ աստիճանի (2019թ. մայիս) մեդալներով: 2021թ. մարտի 10-ի ԱՀ նախագահի հրամանագրով Հայկը հետմահու պարգևատրվել է նաև «Մարտական ծառայություն» մեդալով:

Ամուսնացած էր, ունի երկու զավակ: Որդին՝ Ալենը, արժանապատվորեն շարունակում է հոր գործը. դեռ շատ անելիքներ ունի: Հայկի մասին գրվել է դեռևս 1994թ. Արցախի «ԼՂ Հանրապետություն» թերթում տպագրված մի հոդվածում՝ նրա ծառայակից ընկերը՝ հրետանավոր Նիկոլայ Խուրշուդյանի խոսքում. «Մի անգամ մեր դիմաց փռված խաղողագիներից թշնամին կրակ էր թափում ակամանետներից: Մեր նռնակներտող Հայկը չհամբերելով՝ դուրս եկավ խրամատից և հասակով մեկ կանգնած՝ երկու անգամ կրա-

կեց խաղողագիների ուղղությամբ: Դրանից հետո թշնամին այլևս լռեց»:

Բաբայանների կրտսեր որդին՝ Հովհիկը, ծնվել է 1980թ. նոյեմբերի 21-ին Ստեփանակերտում: Նա ևս սովորել է Հովհ. Թումանյանի անվան հ.9 միջնակարգ դպրոցում: Մայրը՝ Արմիդան, պատմում է, որ որդին սովորել է բարձր առաջադիմությամբ, ամեն ինչում եղել է օրինակելի. նրան իղեպալ-իղեք էին համարում ընկերները, որոնց օգնում էր դժվար պահերին: Մեծ թե փոքր սիրում ու հարգում էին նրան:

1998-ին գորակոչվել է ԼՂՀ ՊԲ-ի շարքերը, մասնակցել սերժանտական դասընթացների: 2000 թվականին, երբ ավարտել էր ծառայությունը, հրամանատարը նրան առաջարկում է մնալ բանակում ու շարունակել ծառայությունը՝ համոզված լինելով, որ Հովհիկը կարող էր բազում խոչընդոտներ հաղթահարել ու բարձունքներ նվաճել: Բայց նա ուսման ծարավ ուներ, որն ընդգծվել էր դեռևս դպրոցական տարիներին, երբ ուսանավորներ էր գրում և արտասանում միջոցառումների ժամանակ: Դրանք հիմնականում նվիրված էին Արցախյան առաջին պատերազմի հերոսներին, մասնավորապես՝ հորեղբորը՝ Վահգիֆին, որն իր կյանքը զոհաբերեց այդ ազատամարտին: Մայրը սուրբ մատուցել էր պատերազմից հետո և որդու հուշատեղը, որը ողորված է վարակիչ հայրենասիրությամբ: Կարծես հայրենասիրությունը այս ընտանիքում փոխանցվում է ժառանգաբար:

Ահա այսպիսի ընտանիքների որդիներն է հայրենիքի իրական զինվորն ու պաշտպանը:

Արցախյան առաջին ազատամարտի տարիներին, երբ հայրն ու ավագ եղբայրը պատերազմի մեջ էին, տան ամբողջ հոգսը ծանրացած էր Հովհիկի ուսերին. ինքը պիտի հոգար ընտանիքի կարիքները. չէ՞ որ տան տղամարդը ինքն էր: 2002-ին, երբ հայրը անցնում է զինվորական կենսաթոշակի, Հովհիկը ծառայության է անցնում վերանորոգման գումարտակի ուսումնական վաշտում: Բարձրագույն կրթությունը ստացել է ԵՊՀ Ստեփանակերտի մասնաճյուղում: Տուցաբերած բարեխիղճ ծառայության և յուրաքանչյուր ուստարակա լավագույն ցուցանիշների համար նա արժանացել է բազմաթիվ պատվոգրերի ու մեդալների: Հովհիկը գումարտակի շտաբի պետի տեղակալ էր՝ կապիտանի կոչումով: Լրացել էր ծառայության 18 տարին: Երկու եղբայրներն էլ շատ կարգապահ զինվորներ էին:

Հովհիկ Բաբայանը պարգևատրվել է «ՀՀ ԶՈՒ 20», «Անբասիր ծառայության համար» 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի, «Երեբունի - 2780», «Տիգրան Մեծ», «ԱՎԱՀՄ ՀԿ», «Մարշալ Բաղդասարյան», «Անդրանիկ Օզանյան», «Հայրենիքի պատիվ» արիություն (1992-2017)», «Հայրենիքի պաշտպանության համար» մեդալներով: 2021թ. մարտի 10-ի ԱՀ նախագահի հրամանագրով Հովհիկը ևս հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Երբ Հովհիկի մեդալներն էինք գրանցում, նրա կրտսեր որդին՝ Մարատը, անհանգիստ կանգնել էր մեզ մոտ ու չէր հեռանում: Նրան թվում էր, թե ինչ-որ մեկը իրենից կարող էր խլել հոր փառահեղ ուղին հաստատող իրեն և ապացույցները: Ավագ որդին՝ Արենը, հասուն տղամարդու տպավորություն էր թողնում: Հուռով նա էլ կմեկնի ծառայության: Ահա թե ինչ է հիշում. «Դեռևս 2016թ. ապրիլյան պատերազմի օրերին, երբ շատերն իրենց ընտանիքները տեղափոխում էին ապահով վայր, հայրս միշտ ասում էր. «Զինվորին տանը դիմավորող պիտի լինի, որ նա վստահաբար կանգնի հայրենիքի պաշտպանության դիրքերում»: Ընկերական շրջապատում շատ հարգված ու սիրված մարդ էր հայրս: Սեղանի շուրջ էլ ընկերները միշտ նրան էին վստահում սեղանապետի գործը: Հատերի համար էր հայրս եղել կամ հարսանքի քավոր, կամ խաչեղբայր: Նրա մնան ինձ էլ է գրավում ռազմական գործը: Հորս մահից հետո շատ եմ փորձել փոխել այն կարծրատիպը, որ այստեղ ամելիք չունեն, այնուամենայնիվ, իմ մեջ հաղթել է հայի հոգում դրոշմ-

ված գոյության պայքարի շարունակողի հոգեբանությունը: Վստահաբար ասում եմ, որ լինելու եմ հորս ու հորեղբորս արժանի հետնորդ: Մեր սերունդը պիտի արժիվների բանակ լինի, ոչ թե աղավնիների, որ խաղաղության խորհրդանիշներն են: Արժիվներն են իրականում իսկական խաղաղություն բերողները: Հորից շատ սիրել եմ հորեղբորս՝ Հայկին: Նրա խոսքը խոսք էր նաև հորս համար»:

Խելացի երիտասարդը մեքեբումներ է կատարում Ավոյի, Նժդեհի իմաստուն մտքերից ու խոր ցավով արձանագրում հոր վերջին խոսքերը. «Վերջին անգամ նրա հետ խոսել եմ հենց այդ օրը՝ հոկտեմբերի 2-ին: Կարծես թե կանխագույն էր վերահաս վտանգը. «Արեն, տան մեծը դու ես, տիրություն արա...», ու լռեց ...: Հետո լսեցինք ծանր բոքը»:

Հուշերի կծիկը բացում են հարազատները, ու թվում է՝ վերջ չկա: Միակ քույրը՝ Սաթիկը, պատմում է. «Եղբայրներիս ծանր կորստից սիրտս ճաք է տվել: Ես նրանց լուսն սյունն էի, հիմա ամբողջովին խավար է շուրջս: Հիշում եմ, որ երբ բժշկական ուսումնարան էի ընդունվել, Հայկը առաջին աշխատավարձից ինձ համար ուղումներով բանտ էր առել, ուրախությունից ու հրճվածից պարուն էի: Հատ ուշադիր ու հոգատար էր, կատակասեր: Նրա հետ տխրել հնարավոր չէր: Ինձ փաղաքշորեն Թաթևիկ էր անվանում: Մի տարուց ավելի է՝ չեմ լսում այն, այնքան եմ կարոտել նրա այդ բառին:

Պատերազմից առաջ էր. առողջական խնդիրներ ունեի: Եղբայրներս անհանգստությունից չգիտեին ինչ անել: Իրար էին խառնվել: Հայկն ու Հովհիկը տարբեր բեռներ էին մարդիկ էին: Հովհիկը խաղաղ ծով էր, Հայկը՝ անսահմ փորձեր: Հովհիկը չափած-ձևած տղամարդ էր, ամեն ինչում խելացի դրոշումներ կայացնող: Այդ տարբերությամբ հանդերձ՝ նրանք լրացնում էին իրար:

Եղբայրներիս հողին հանձնելուց հետո հաջորդ օրը գնացի աշխատանքի (Մարտունի քաղաքի հիվանդանոցի վիրահատարանի բուժքույր եմ): Բոլորը զարմացել էին: Հիշեցի կարող չգնալ: Նախ՝ ուզում էի փախչել դառն իրականությունից, հետո՝ վիրավորները բազմաթիվ էին, և ես պետք է կյանքեր փրկեի: Թե ինչ ահասարուտ տեսարանների էի ականատես լինում, դժվար է պատմել: Մտածում էի՝ այստեղից դուրս գալուց հետո ինձ հոգեբուժարան են տանելու: Իսկ երբ հանդիպեցի ծնողներին, ասացի. «Դուք բախտավոր եք, որ ձեր որդիների ամբողջական մարմինները ձեր ձեռքով հողին անհանձնելու»:

Այսօր միակ սեփականք եղբայրներիս թողած խելացի, դաստիարակված երեխաներն են, հատկապես Ալենն ու Արենը՝ երկուսի ավագ որդիները, որոնք ամեն քայլափոխի փորձում են լրացնել այն մեծ ճաքը, որ առաջացրել են եղբայրներս, որոնցից խիստ «վիրավորված» եմ, որ «ուրազմ» ինձ»:

Մայրը՝ Արմիդան, հիշում է. «Դեռևս Արցախյան առաջին պատերազմի տարիներին, երբ մարտական գործողությունները դեռ չէին ծավալվել, բուժքույր էի, գնում էի հարևան թուրքերին սրկելու, Հայկս ասում էր. «Մամ, մեռակ չգնա, ես քեզ հետ կգամ»: Հիշում եմ, որ փստահում նրանց: Երբ գերեզման եմ գնում, սիրտս ավելի է երկատվում. մի մասը Հայկին է ձգտում, մյուս մասը՝ Հովհիկին, ու ահավոր ցավը բզկտում է հոգիս: Երկու օտեղ հարսների վիզը ծուռ մնաց, այսքան դաժան ճակատագիր թշնամուս էլ չեմ ցանկանա: Միակ միսթարությունս որդիներիս թողած զավակներն են, որոնցով շարունակում եմ ապրել, եթե, իհարկե, դա կարելի է ապրել համարել...»:

Հերոսների հայրը՝ Վիլյաթը, ասում է. «Ես էլի տնից դուրս եմ գալիս, աշխատանքի եմ գնում, ավելի շուտ՝ փախչում եմ տնից, չգիտեմ՝ Արմիդան ոնց է ամբողջ օրը որդիների նկարների մոտ օրն անցկացնում: Ցավը մեկը կլինի, մյուսով կմիսթարվես էլի. գոնե երկուսը չլինենի...»:

Հիմա հարազատներն ապրում են Հայկի ու Հովհիկի նկարներով ու այն տեսանյութերով, որոնցում եղբայրները կան... ապրում են:

Փռաք նրանց անմար հիշատակին:

ՂԱՍԱԿԱՆ ԷՋ

ՐԱՅՅՈՒ ՆՈՒԹԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Նախորդ երկու մասերում մեջբերել էինք Րաֆֆու 1881 թվականին Գանձակ և Ելենդորֆ այցերի նոթերը:

Րաֆֆին թիֆլիսից ուղևորվել էր երկու ամսով Գյումրիից Արցախ և բազմաթիվ հետաքրքիր հանդիպումներ ունեցել և փաստեր նկարագրել:

Հաջի-շեն

Ելենդորֆում ես մնացի կես ժամ միայն: Այստեղից պիտի գնայի Հաջի-քենը, որը Գանձակի ծառայողների ամառանոցն է: Ծանապարիզ հարթած էր, որովհետև մինչև հիշյալ գյուղը Գանձակից միշտ կառքեր և սայլակներ են գնում: Ելենդորֆից սկսյալ Գանձակի տափարակը վերջանում է և ծանապարիզ բարձրանում է դեպի բլուրների գառնիկները, և լեռների վրայով պտույտներ գործելով, հասնում է մինչև Հաջի-քենը: Ելենդորֆից այն կողմը բնությունը բոլորովին փոխվում է, կարծես մարդ մտնում է մի ուրիշ աշխարհ: Հետզհետե բլուրները ծածկվում են քիերով, և ապա սկսվում են անտառները: Ես հագած ունեի բարակ ամառային հագուստ, մինչև Ելենդորֆ հասնելս սաստիկ շոգում էի տոթից. իսկ այժմ սկսեցի մրսել և միևնույն օրը հարփուխ ստացա:

Հաջի-քենը, ինչպես ասացի,

կոչված գյուղը: Ծանապարիզ, որ տանում էր այնտեղ, մի նեղ շավիղ էր, որ պտտվում էր լեռների վրայով: Խիստ հեշտությամբ կարող էի մոլորվել, մանավանդ, որ տեղ-տեղ շավիղը կորչում էր քիերի մեջ: Իմ բախտից պատահեց մի գյուղացի, որ Հաջի-շենից գնում էր դեպի Սյունուկ:

Երեկոյան, դեռ արեր մայր չմտած, ես հասա Ազատ գյուղը: Այստեղ իջևանեցի մի երիտասարդ քա-

Ռոմիետև այդ դպրոցները վերջին ժամանակներում բավական աղմուկներ բարձրացրին, ես հետաքրքրվեցա տեղեկանալ պատճառները:

Հետո առա ինձ հետ, որպես ուղեցույց, գյուղացիներից մեկին, իսկ որպես առաջնորդ Սարգիս Ջալալյանցի ծանապարհորդության երկու հատորները: Շուտով հայտնվեցավ, որ այդ գրքերը միևնույն տեսակ բաներ էին, որպես թիֆլիսի շտաբի



Ազատ գյուղը: Գյումրիից Արցախ

հանայի մոտ, որ Գանձակից եկել էր ամառանոց: Արևը մայր մտավ, բայց դեռ բավական լույս էր, որովհետև լուսնկա գիշեր էր: Գյուղացիները ցերեկվա աշխատությունից դադարելով, հավաքվել էին խրճիթների

պատրաստած քարտեզները, միայն տարբերությունը նրանումն էր, որ քարտեզների մեջ բոլոր տեղերի անունները թուրքացնում են, բայց ճիշտ իրանց տեղում են դնում, իսկ Ջալալյանը տեղերի անունները հայացնում է և ցանկացած տեղումն է դնում: Երևում է, լուսահոգին շատ տեղեր աչքով չի տեսել, գրել է ուրիշներից հարցնելով. թեև անդադար կրկնում է, թե հայրենյաց սուրբ հողը համբուրելով, արտասուք թափելով, անցա այստեղ, այնտեղ և այլն: Չիով գնալ շատ դժվարին էր լեռների ելևէջների վրա, ես վճռեցի այնօր ոտքով ծանապարհորդել:

Ես կամենում էի տեսնել Գեոգոյլ (Կանաչ լիճ) կոչված փոքրիկ լիճը (Կանաչ լիճը Մարալի լիճն է, իսկ Գյոկգյոլը-Կապույտ լիճն է): Այդ լիճը կազմվել է Քյափազ սարի փլատակներից: Մինչև այսօր ժողովրդի հիշողության մեջ մնացել է դարևոր ավանդությունը, թե ինչպես երկրաշարժից հիշյալ սարի մի մասը քանդվեցավ և թափվելով ծորի մեջ, կտրեց գետի(?) ընթացքը, որ նույն ծորով հոսում էր: Ջուրը հավաքվելով լճացավ, բայց դարձյալ ահագին ժայռերի տակից նա բուսնում է և շարունակում է իր ընթացքը:

Քյափազ սարի փլատակները, դիզելով ահագին քարաժայռեր միմյանց վրա, կազմել են բազմաթիվ խռոչներ և այրեր, որոնք մեծ ծառայություն են արել բնակիչներին երկրի խռովյալ ժամանակներում: Այդ այրերի մեջ պատսպարվում էր հայ ժողովուրդը լեզգիների, պարսիկների և օսմանցիների արշավանքների ժամանակ: Այնտեղ, ուր գտնվում է Քյափազ լեռան քարակարկառը, կոչվում է Չինգիլ, այսինքն չանկ, որ նշանակում է անկարգ կերպով դիզված քարեր: Չնայելով, որ Քյափազ սարի մի մասը քանդվել է, բայց նա դարձյալ բարձրաբերձ հանդիսանում է իր շր-



Կեպաս լեռը, Մարալի Կանաչ լիճը

ջակա լեռների մեջ: Անտառներից մերկ է նա:

յոց նրա դեպի արևմտյան կողմը բարձրանում է Սարի-յալ կոչված սարը, որի գագաթի վրա կա մի

Վերադառնալով Քյափազ սա-



Կեպաս լեռան քարակույտերը

րից, ես կրկին եկա Ազատ գյուղը, ուր իջևանել էի: Այդ գյուղը գտնվում է լեռան բարձրավանդակի վրա, նրա դեպի արևմտյան (?) կողմը բարձրանում է Սարիյալ կոչված սարը, որի գագաթի վրա կա մի հա-

հայոց մատուռ, որի մեջն է ս. Պանդայրոն բժշկի գերեզմանը: Նույն լեռան արևելյան կողմը, մի ծորի մեջ գտնվում է հայոց վանք, որի մեջն է Հերմոգիմե քահանայի գերեզմանը:



Պանդայրոնի մատուռը կանգուն ժամանակ



Պանդայրոնի մատուռը 2020 թվականին



Հաջիշենի տեսարան: Հեռվում Կեպաս-Ալիարակ լեռն է

Գանձակի ամառանոցն է. այնտեղ է անցկացնում ամառը զավառապետը իր բոլոր ծառայողներով, այնտեղ են լինում քաղաքի բոլոր պաշտոնատարները: Գանձակից մինչև այստեղ բերած է հեռագրական թել, Հաջի-քենը այժմ բացի ամառանոց եկողներից ուրիշ բնակիչներ չունի: Բայց նա առաջ եղել է հայաբնակ գյուղ, մինչև այսօր մնացել է հայոց եկեղեցին, որ կիսով չափ ավերակ է: Գյուղից ոչ այնքան հեռու, անտառի մեջ երևում է հայոց գերեզմանատունը:

Ազատ-Սուլուկ

Մինչև Հաջի-շեն ես եկա միայնակ, որովհետև ծանապարիզ ուղիղ էր և հեռագրական թելի սյուները օգնում էին ինձ չմոլորվելու: Բայց հեռագրական թելը Հաջի-շենում վերջանում էր: Այստեղից ես պիտի գնայի Սյունուկ կամ Ազատ

կտուրների վրա և բըբուզ նստած խոսում էին միմյանց հետ: Ես իմ հյուրընկալի հետ մոտեցանք մեկ խումբի: Խոսակցությունը դարձյալ կազակների վրա էր, որոնք գյուղացիների խոսի դեպքերը և հունձքը ուտեցնում են իրանց ծիաներին և այլն:

Ազատ գյուղում ես մնացի երկու ամբողջ օր, որովհետև այդ գյուղի մերձակայքում մի քանի նշանավոր տեղեր կային, պետք էր տեսնել:

Ազատ գյուղում պատահեց ինձ ծանոթանալ Կովկասյան ուսումնական շրջանի տեսչի օգնականի հետ: Նա մի հայ երիտասարդ էր, որ իր ընտանիքով եկել էր այդ գյուղը ամառը անցկացնելու համար: Որպես Կովկասյան ուսումնական շրջանի տեսչի օգնական, նրան հանձնված էր աշխատել թե ելիզավետոպոլի, թե Նուխա և թե Ղարաբաղի կողմերի հայաբնակ գյուղերում ռուսաց դպրոցներ բաց անել:

ԳՐԱԿԱՆ

Արիս ԱՐՍԵՆԻ

ՄԻ ԱՆՈՒՆ ԷՒ ՍԵՐՏԵԼ ԴԵՌ ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ...



Չեմ ապրի,
Եթե հանկարծ պակասի
Բանաստեղծության
Անկեղծությո՜ւնը:
Թ՛ող մարդիկ իրար որպիսությունը
Բանաստեղծության ողջագուրանքով
Զգան,
Հասկանան:

Արիս ԱՐՍԵՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ...

Մի անուն էի սերտել
դեռ վաղ մանկությունից
և այն անընդհատ կրկնում էի մտքիս մեջ՝
Հայաստան, Հայաստան:

Մտքիս մեջ՝
որ թշնամին չլսի
ու չիմանա այդ երկրի տեղը՝
Հայաստան, Հայաստան:

Բայց թշնամին գտավ ինձ
ու կտրեց լեզուս,
որ երբեք չարտաբերեմ այդ անունը՝
Հայաստան, Հայաստան:

Եվ թշնամին այդպես էլ չիմացավ,
որ այդ անունը
ո՛չ թե լեզվիս վրա էր,
այլ... սրտիս մեջ՝
Հայաստան, Հայաստան:

22.07.2021

Երևան, Մալաթիա-Սերաստիա

Մենք ծնկած ենք, իմ ժողովուրդ,
Ընկած ենք մենք, բայց ո՛չ գերի:

Բիբերի մեջ քո նահատակ

Որդոց մարած աչուկների՝
Տեսնում եմ ես երկո՛ւնք մի նոր,
Այդ ծնունդն է քո՝ նորովի,
Ելնես պիտի դյուցազնական
Հաղթ կազմվածքով քո կորովի:

Բելը նորից կանգնեց քո դեմ,
Հավաքիր քեզ, ոտքի՛ ելիր,
Կանգնես պիտի դեմ-հանդիման,
Հաղթես պիտի Բելին էլի:

Ելնես պիտի հանց Տիգրան Մեծ,
Ինչպես Վարդան Մամիկոնյան,
Որ հավաքես փշրանք-փշրանք
Կորսված պատիվն ազգի Հայկյան:

13.01.2021

Երևան, Ավան, Ծարավ աղբյուր

Գյուղում խոտհնձի օրեր են եռուն,
Իսկ ես բռնել եմ օրերի հեռուն:

Գյուղից կարոտ ու ցավ է մնացել,
Իցի՛վ թե գյուղից դեռ... չեմ կշտացել:

Գյուղը իմ խիղճն է, իմ օրը բեղուն...
... Քաղաքը կաթսա՝ կաս-կարմիր գեռուն:

05.06.2021

Երևան, Ավան, Ծարավ աղբյուր

Մեր բոստանում այս գարնանը
Ամեն տարվա պես
Կրկին բացվել են ահա
Մանուշակներն հեգ:

Ասես ոչինչ չի եղել՝
Կռիվ ու ավեր,
Ասես՝ չեն էլ զոհվել մեր
Տղերքը ջահել:

Բնությունն իր գործին է,
Չի հապաղելու,
Իսկ աշխարհն իր ընթացքը
Շա՛տ է շեղելու:

07.05.2021, 3:43

Ստեփանակերտ

Վաղը մարտի 1-ն է՝ նորի՞ց են սպառնում...

«Մարտի 1»-ով:
Նոր դա՛վ՝ Ն.Փ.-ից:
Նորից՝ մարտի 1:
Նորից՝ «Մարտի 1»:
Նորից ու կրկի՞ն:
Կրկի՞ն:
Վերստի՞ն:
Կուզեի նայել նրա աչքերին:
Գայլայի՞ն:
Դեղի՞ն:
«Թողություն տուր, Տեր, ծանրը հավա-
րին»...

28.02.2021

Երևան, Ավան, Ծարավ աղբյուր

Աշխարհը ուղտի ականջում քնած՝
Աշխարհը այդպես քնած էլ մնաց:

Թուրքը երեսը նրա կեղտոտեց,
Կեղտոտ քամակն էլ պաչել՝ ստիպեց:

Կեղտոտ քամակը չուզեցի՞ր պաչել՝
Շունն ինքն էր, բայց քեզ ստիպեց հաչել:

Աշխարհ, ուշքի՛ եկ, մի՛ մնա քնած,
Բացիր աչքերիդ կոպերը փակված:

Մաքուր երեսով մարդանջ գնա,
Մի՛ թող՝ ծաղրի քեզ թուրքը անվա:

24.03.2021

Երևան, Ավան, Ծարավ աղբյուր

Դու նայեցիր աչքերիս մեջ, ու՛ անցար,
Ցավ, տխրություն՝ աչքերիս մեջ, ու՛
անցար,
Հուզում, թախիծ, տանջանք, զղջում, ու՛
անցար,
Լուռ էր կարոտն աչքերիս մեջ, ու... անցար:

Աչքերդ տանում են չգիտեմ՝ թե ուր,
Գլխիկոր գնում եմ չգիտեմ՝ թե ուր,
Անդա՛րձ է իմ ուղին, սակայն՝ ո՛չ անհույս,
Կհասնե՛մ, գնում եմ, չգիտեմ՝ թե ուր:

ԱՇՆԱՆ ՏԵՐԵՎՆԵՐ

Աշնան տերևներ՝ կարմիր ու դեղին,
Դուք, որ լքել եք մայթերի թեղին,
Ընկած եք հիմա ասֆալտի վրա,
Ապրում է ձեր մեջ կարոտը նրա:

Մայթերի թեղին մենակ է, լքված,
Սիրտը լցված է, իսկ աչքերը՝ թաց,
Թեղին մայթերին թախծում է տեղին,
Աշնան տերևներ՝ կարմիր ու դեղին:

ՊԱՐՁԱՊԵՆ՝ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ես կուզեի,
Որ միայն դու՛ իմ հայացքում մոլորվեիր:
Ես կուզեի,
Որ միայն դու՛ իմ գրկի մեջ խորովեիր:
Ի՛մ շուրթերը
Մեղմ հավեին քո շուրթերին,
Ի՛մ ձեռքերը
Պարանոցը քո գրկեին:
Ի՛մ երազը
Սկսվեց ու վերջ չունենար,
Քո երազը գրկած գնա՛ր,
Գնա՛ր,
Գնա՛ր...

Սկսված է «ԼՈՒՍԱՐԱՐ»-ի 2022 թվականի բաժանորդագրությունը

Պատերազմը ցավ ու վիշտ բերելուց գատ՝ նաև փոխել է մեր կյանքի բնականոն ռիթմը: Անցյալն ու ներկան հիմա մեզ նույն դեմքով են ներկայանում, իսկ ապագան մշուշոտ է: Ո՛ւր է տանում ճամփան, որ ուրիշներն են, ցավոք, բացել մեզ համար: Հիմա հարցերն ավելի շատ են, քան պատասխանները, որոնք ոչ թե պիտի ուրիշից ստանանք, այլ հենց ինքններս գտնենք: Գտնենք ու քննարկենք, վերլուծենք ու համադրենք, բանավիճենք ու կիսվենք...

«ԼՈՒՍԱՐԱՐ»-ը եղել է մնում է հանրապետության բոլոր մանկավարժների վստահելի գրուցակիցը: Համախմբվե՛նք կրկին մեր սիրելի թերթի շուրջ:

Տարեկան բաժանորդագինը դարձյալ նույնն է՝ 3000 դրամ: Սպասում ենք բոլորիդ նորամոր հանդիպումների հույսով:

ԿՈՐԵԼ Է

Կորել է Արշակ Գրիգորիի Սաֆարյանի 017558 համարի դիպլոմը՝ տրված 2013 թվականին Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի կողմից: Համարել անվավեր:

Խոսք հիշատակի

ՍՈՒՄԱՆՆԱ ԳՐԻԳՈՐԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ



Խոր ցավ ու վիշտ ենք ապրում մեր սիրելի գործընկերուհու՝ Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցի պատմության ուսուցչուհի Սուսաննա Գրիգորի Ենգիբարյանի անժամանակ մահվան առթիվ:

Չ ա փ ա զ ա ն ց ծանր ու դժվար է ափսոսանքի, սիր- փանքի խոսքեր գրել երիտասարդ կյանքի բերկ- րանքը լիարժեք չզգացած մարդու, առավել ևս՝ գործընկերուհու կորստի դեպքում:

Իր մարդկային նկարագրով, համեստությամբ, բոլորի հետ հաղորդակցվելու կարողությամբ ու անկեղծությամբ Ս. Ենգիբարյանը վայելում էր կրկել-

տիվի սերն ու հարգանքը: Նա մշտապես աչքի էր ընկնում իր պարտականությունների կատարման մեջ, իր առջև դրվող խնդիրներին մեծ պատասխանատվությամբ մոտենալու հատկությամբ, անխնայ, անտրտունջ աշխատանքով, բարեխղճությամբ ու հոգատարությամբ: Իր հետ աշխատած, իրեն ճանաչած մարդկանց սրտերում Ս.Ենգիբարյանը լույսի շող, ջերմություն, բարություն և թանկ հուշեր թողեց, ինչպես նաև դառը կսկիծ՝ իր չվայելած կյանքի ու կիսատ թողած երազանքների համար:

Ավ. Իսահակյանի անվան հ.10 դպրոցի կրկելտի- վի ողջ անձնակազմը մեկ անգամ ևս ցավակցում է սիրելի գործընկերուհու հարազատներին, ընկերներին, մտերիմներին այս անդառնալի, անժամանակ և ծանր կորստի համար:

Համբերություն և տոկունություն ենք մաղթում այս դժվար պահին:

Ստեփ. Ավ. Իսահակյանի անվան հ.10 դպրոցի մանկավարժական կրկելտիվ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝
Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99,
E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույ-
գությունն ապահովում են հեղինակները: Թերթը
ընթերցողների հետ գրագրություն վարելու պար-
տավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս»
ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 3 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 18.12.2021թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: